**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**28 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1181- Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 24-ին)**
**(քաղ. Երևան)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/17976-14 և նոյեմբերի 28-ի N 06/3-2/21552-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (1 տեղ, 1,010 կգ ընդհանուր քաշով, 12,650 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-649-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

1-3/1-3.4/Ա.Ա771-14
5.12.2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 դեկտեմբեր 2014 թվականի N Մ - 1182- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ- 442 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 5-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (18 տեղ, 11,048 կգ ընդհանուր քաշով, 39,656.30 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր ընդհանուր արժողությամբ, իսկ 7,109 ԱՄՆ-ի դոլար կազմում են փոխադրման ծախսերը, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ     Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ... COORDINATING COMMISSION ... 02508261

13/13.Ж/ЖԱ44Ж ~ 1 1
5.12.2014թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1183 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանյան մասնաճյուղ)(N1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 5-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված 4 ավտոմեքենաները (4 տեղ, 5,476 կգ, 17,500 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 2,000 եվրո, նույնականացման համարը՝ Opel Astra-G-Caravan VIN: WOLOTGF3532183014, նույնականացման համարը՝ Opel Vectra VIN: WOLOZCF4841014696, նույնականացման համարը՝ Opel Astra VIN: WOLOAHL4855096237 և նույնականացման համարը՝ Opel Astra-G-Caravan VIN: WOLOTGF3522262814, ԱՄ ՄՁՄ ՏՄ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1184 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի համաձայնեցման թերթը* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (9 տեղ, 1,633 կգ ընդհանուր քաշով, 191,789 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,900 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան, Հայաստանի [illegible] Արմավիրի մարզպետարան, Հայաստանի Հանրապետ[illegible] մարզպետարան և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ[illegible]

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Սարքավորումների բաշխման ցանկ**

| Մարզ | Բուժ հիմնարկ | Սարքավորում | Հատ | Հատի արժեքը՝ ԱՄՆ դոլար | Ընդամենը՝ ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|
| Արարատ | Արարատի ԲԿ | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՍ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | | ՔԲՀՍ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | | ՔԲՀՍ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Արարատ | Մասիսի ԲԿ | Վերակենդանացման սեղան Cosycot | 1 | 7,714.33 | 7,714.33 |
| | | Ֆոտոթերապիայի սարք | 1 | 3,173.00 | 3,173.00 |
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |
| | | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՍ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | | ՔԲՀՍ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | | ՔԲՀՍ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Նորածնի շարժական տաքացուցիչ | 1 | 2,922.50 | 2,922.50 |
| | | Վարդակ ապահովիչով | 2 | 20.18 | 40.36 |
| | | Ֆոտոթերապիայի աչքի պաշտպանիչ | 10 | 3.51 | 35.10 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Արագածոտն | Աշտարակի ԲԿ | Նորածնի շարժական տաքացուցիչ | 1 | 2,922.50 | 2,922.50 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Վարդակ ապահովիչով | 1 | 20.18 | 20.18 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Արագածոտն | Թալինի ԲԿ | Նորածնի շարժական տաքացուցիչ | 1 | 2,922.50 | 2,922.50 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Ֆոտոթերապիայի սարք | 1 | 3,173.00 | 3,173.00 |
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |
| | | Վարդակ ապահովիչով | 1 | 20.18 | 20.18 |
| | | Ֆոտոթերապիայի աչքի պաշտպանիչ | 10 | 3.51 | 35.10 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Կոտայք | Աբովյանի ծննդատուն | Վերակենդանացման սեղան Cosycot | 1 | 7,714.33 | 7,714.33 |
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՕ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | | ՔԲՀՕ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | | ՔԲՀՕ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Ֆոտոթերապիայի սարք ՄԻՆԻ | 1 | 2,004.00 | 2,004.00 |
| | | Վարդակ ապահովիչով | 1 | 20.18 | 20.18 |
| | | Ֆոտոթերապիայի աչքի պաշտպանիչ | 10 | 3.51 | 35.10 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Կոտայք | Հրազդանի ԲԿ | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՕ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | | ՔԲՀՕ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | | ՔԲՀՕ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Վերակենդանացման սեղան Cosycot | 1 | 7,714.33 | 7,714.33 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |
| | | Ֆոտոթերապիայի սարք ՄԻՆԻ | 1 | 2,004.00 | 2,004.00 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Վարդակ ապահովիչով | 1 | 20.18 | 20.18 |
| | | Ֆոտոթերապիայի աչքի պաշտպանիչ | 10 | 3.51 | 35.10 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Արմավիր | Արմավիրի ԲԿ | Նորածնի շարժական տաքացուցիչ | 1 | 2,922.50 | 2,922.50 |
| | | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՕ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | | ՔԲՀՕ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | | ՔԲՀՕ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Վարդակ ապահովիչով | 1 | 20.18 | 20.18 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Արմավիր | Վաղարշապատի ծննդատուն | Վերակենդանացման սեղան Cosycot | 1 | 7,714.33 | 7,714.33 |
| | | Տաքացվող ջրային ներքնակ | 1 | 2,936.25 | 2,936.25 |
| | | Ներերակային Ինֆուզիոն պոմպ | 1 | 1,670.00 | 1,670.00 |
| | | Ֆոտոթերապիայի սարք ՄԻՆԻ | 1 | 2,004.00 | 2,004.00 |
| | | Պուլսօքսիմետր | 1 | 1,391.13 | 1,391.13 |
| | | Վարդակ ապահովիչով | 1 | 20.18 | 20.18 |
| | | Ֆոտոթերապիայի աչքի պաշտպանիչ | 10 | 3.51 | 35.10 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Երևան | ՎԱՊՄ և ԳՀԻ | Ուլտրաձայն. հետազոտ-ն սարք + 4 տվիչ | 1 | 25,885.00 | 25,885.00 |
| | | Ուլտրաձայն. հետազոտ-ն սարք ի տվիչ | 1 | 5,010.00 | 5,010.00 |
| | | Վերակենդանացման սեղան Cosycot | 2 | 7,714.33 | 15,428.67 |
| | | Ֆոտոթերապիայի սարք ՄԻՆԻ | 1 | 2,004.00 | 2,004.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՔԲՀՄ կոնտուրներ | 20 | 60.90 | 1,218.00 |
| | | ՔԲՀՄ կանյուլաներ | 40 | 14.55 | 582.00 |
| | | Վենտիլյատորի Կոնտուրներ | 70 | 17.57 | 1,230.00 |
| | | CPAP փչիչ, կոմպրեսոր | 10 | 104.40 | 1,044.00 |
| | | Վարդակ ապահովիչով | 3 | 20.18 | 60.55 |
| | | CPAP Կոնտուրներ | 40 | 32.25 | 1,290.00 |
| | | Ֆոտոթերապիայի աչքի պաշտպանիչ | 140 | 3.51 | 491.40 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 5 | 11.76 | 58.82 |
| | | CPAP խողովակներ | 50 | 31.00 | 1,550.00 |
| | | | | | |
| | | | | | |
| Երևան | Էլեն Նարե | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՄ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | ծննդաբերության | ՔԲՀՄ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | կենտրոն | ՔԲՀՄ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| | | | | | |
| Երևան | Բեգլարյան ԲԿ | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՄ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | | ՔԲՀՄ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | | ՔԲՀՄ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| | | | | | |
| Լոռի | Սպիտակի ԲԿ | Ֆոտոթերապիայի սարք ՄԻՆԻ | 1 | 2,004.00 | 2,004.00 |
| | | Ֆոտոթերապիայի աչքի պաշտպանիչ | 10 | 3.51 | 35.10 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| Երևան | Սուրբ | Քթային բարձր հոսքի սարք ՔԲՀՄ | 1 | 2,634.63 | 2,634.63 |
| | Աստվածամայր | ՔԲՀՄ կոնտուրներ | 5 | 60.90 | 304.50 |
| | ԲԿ | ՔԲՀՄ կանյուլաներ | 5 | 14.55 | 72.75 |
| | | Վերակենդանացման պարկ , դիմակներով | 1 | 11.76 | 11.76 |
| | | | | | |
| ԼՂՀ | Ք. Կոքսի անվան | Մերսման սեղան Ֆիզիոթերապիայի համար | 1 | 200.00 | 200.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վերականգնողական | Եկրոթերապիայի մերսման սարք | 3 | 1,166.66 | 3,500.00 |
| | Կենտրոն | Հիդրոթերապիայի մերսման սարք | 2 | 1,150.00 | 2,300.00 |
| | | Մերսման սարքերի տուփ | 1 | 20.00 | 20.00 |
| | | լողալու հարմարանք հիդրոթերապ. համար | 18 | 5.55 | 100.00 |
| | | Մարտկոցներ հաշմասայլակի համար | 4 | 80.00 | 320.00 |
| | | | | | |
| | | | | | |
| | | Ընդամենը | | | 191,789.00 |
| Տեղափոխման ծախսերը կազմել են 5900 ԱՄՆ դոլար: | | | | | |
| | | | | | |
| Տնօրեն՝ | | | | | |
| ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ | | պ[illegible] | | | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1185 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական սարքավորումների ի և պարագաների (8 տեղ, 4,757 կգ ընդհանուր քաշով, 218,441 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,875 ԱՄՆ-ի դոլար, «Արարտյան» տարածաշրջնային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը անհատույց հանձնվելու է «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳ... Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1186-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՆԻՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 21-ի N 07/80-2/20778-14 և նոյեմբերի 24-ի N 06/3-3/20951-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 21-ի N 02/9088-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N ՖՐ/ԱնՄ-4/9366-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 1,522,100 դրամ ընդհանուր արժեքով «Տանիքի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2014 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված՝ N 281014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի 4-րդ տան տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 1,522,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբաղյանի կողմից

«03»-ը նոյեմբերի 2014թ.

## «Տանիքի մասնակի վերանորոգում»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Արագածոտնի մարզ, գյուղ Ոսկեհատ, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, տուն 4 հասցեում՝ տանիքի վերանորոգում |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան թաղամաս» ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, գյուղ Ոսկեհատ՝ սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 1,522,100 դրամ |

14/7

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Աբելյան Կարինե (անձնագիր՝ AM0900372, տրվ. 15.10.2012 029 կողմից, հեռ. 077.46.79.40) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2014թ. թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում բնակելի տան տանիքի վերանորոգման աշխատանքներ՝ 1,522,100 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան տանիքի վերանորոգման պայմանագիր, որի արժեքը կազմում է 1,522,100 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին սահմանված կարգով: |

Կազմեց՝ տնօրենի տեղակալ Վ. Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1187-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/21169-14 և նոյեմբերի 28-ի N 06/5-1/21518-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N ՎՊ/22.1/12255-14 միջնորդագիրը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Axios» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ օնկոլոգիական հիվանդություններով տառապող հիվանդներին դեղորայքի տրամադրման միջազգային ծրագրի շրջանակներում ստացված 650 տուփ «Գլիվեկ HGC 100 մգ N 120» դեղի (2 տեղ (10 արկղ), 101 կգ ընդհանուր քաշով, 2,470,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1188-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 07/80-2/20551-14 և նոյեմբերի 19-ի N 06/5-1/20640-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 14-ի N 1/06/1159-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված հագուստի ինքնակպչուն տարբերանշանների (մեկ տեղ, 4 կգ ընդհանուր քաշով, 2,032 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 132 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1189-Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՌՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 07/80-2/20553-14 և նոյեմբերի 20-ի N 06/5-1/20736-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 14-ի N ԱՄ/22.2/12047-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ամերիկահայ բարերար Ստեֆեն Քաշյանի կողմից որպես օժանդակություն «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով, կազմակերպության բարեգործական դեղատան համար ուղարկված դեղորայքի (մեկ տեղ, 23 կգ ընդհանուր քաշով, 28,729.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 191.60 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1190-Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/21764-14 և դեկտեմբերի 3-ի N 06/5-1/22063-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված սարքավորումը (մեկ տեղ, 0.27 կգ ընդհանուր քաշով, 96.82 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 57.07 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՍՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-407-Ա և 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-832-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1191-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/21179-14 և դեկտեմբերի 1-ի N 06/5-1/21787-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված դաշնամուրները (2 հատ՝ 2 տեղ, 836 կգ ընդհանուր քաշով, 44,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,150 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1192-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2014 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/20919-14 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/20596-14 եզրա-կացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնա-դրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-846-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարսլեյթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06945834) 2014 թվականի նոյեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռք-բերում՝ 6,731,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1193-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/21181-14 և նոյեմբերի 24-ի N 06/3-3/20953-14 եզրա-կացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնա-դրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-846-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նար-Տիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06940391) 2014 թվականի նոյեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնաշենքի ապակեպատման աշխատանքների իրականացում՝ 3,099,744 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1194-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/22113-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21982-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան գրասայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-407-Ա և 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-832-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդոքս գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00808686) 2014 թվականի նոյեմբերի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղյա շերտափեղկերի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 240,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1195-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/22284-14 և դեկտեմբերի 4-ի N 06/3-3/22283-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ինֆորմատիկ սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2014 թվականի նոյեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տպիչի ժապավենների ձեռքբերում՝ 390,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացի Կատարինա Վերոնիկա Եվա Ռոտերսի հետ (անձնագիր՝ C74NHZ8M6, փաստացի բնակության հասցեն՝ քաղ. Երևան, Հրաչյա Քոչարի 13, բն. 45) 2014 թվականի նոյեմբերի 6-ին կնքված N 01-06.11.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացների անցկացում՝ 338,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1196-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-676-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 18-ի N 07/80-2/20473-14 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/20581-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի մասին» N Մ-676-Ա որոշման մեջ (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-845-Ա որոշման խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «399,528,726 դրամ» բառերը փոխարինել «500,760,386 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձեյթուն կառուցում» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2014 թվականի նոյեմբերի 12-ին կնքված պայմանագրով նախատեսված գործարքը, որով նախատեսվում է վերակառուցման, վերանորոգման և կառուցման աշխատանքների իրականացում՝ 68,128,870 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

« 12 » նոյեմբերի 2014թ.

**«Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում»**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 500,760,386 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացի» իրավաբանական անձանց միությունը՝ ի դեմս Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2014 թվականի հուլիսի 7-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 183,657,809 դրամ,<br>2. Օդափոխություն և ջեռուցում՝ 8, 009,917 դրամ,<br>3. Մետաղական արտադրանքների պատրաստում և տեղադրում՝ 17,406,000 դրամ,<br>4. Մարզադաշտի խնամքի սարքավորումների, շինանյութերի, ներքին հարդարման նյութերի և պարագաների, էլեկտրոնային մուտքի ու տեսահսկման համակարգերի համար անհրաժեշտ սկաներների, սերվերների, տպիչ սարքերի, սարքավորումների և տեսախցիկների ներմուծում՝ 201,000,000 դրամ,<br>5. Էլեկտրոնային մուտքի ու տեսահսկման համակարգերի համար անհրաժեշտ սկաներների, սերվերների, տպիչ սարքերի, սարքավորումների և տեսախցիկների ձեռքբերում, տեղադրում և կարգաբերում՝ 22,557,790 դրամ,<br>6. Հանրապետական մարզադաշտի մամուլի կենտրոնի վերակառուցում և կահավորում, դրամարկղի վերանորոգում, մետաղական դռների, դարպասների, ցանկապատերի, |

14/12.28

| | | |
|---|---|---|
| | | լուսավորության սյուների պատրաստում և տեղադրում, մետաղական կոնստրուկցիանե-րի պատրաստում և մետաղական մակերեսների փոշեներկում՝ 68,128,870 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Հանրապետական մարզադաշտի մամուլի կենտրոնի նախագծի կազմում՝ 1,500,000 դրամ,<br>- Հանրապետական մարզադաշտի մետալյա կարկասների, միջնորմային պատերի, կախովի առաստաղների, վիտրաժների և սանհանգույցների սարքավորումների ապամոն-տաժման աշխատանքներ, ջրամատակարարման և ներքին կոյուղու ցանցի կառուցում, միջ-նորմների և պատերի, մետաղական կոնստրուկցիաներով ծածկի կառուցում, էլեկտրա-մոնտաժ, ներքին հարդարում, երեսպատում, կահավորում, մետաղական անցուղիների և մետաղական ճաղավանդակներով արտաքին պարիսպի կառուցում՝ 182,157,809 դրամ,<br>- Օդափոխություն և ջեռուցում՝ 8, 009,917 դրամ,<br>- Մետաղական պտուտաձողերի պատրաստում և տեղադրում՝ 17,406,000 դրամ:<br>- Մարզադաշտի խնամքի սարքավորումների, շինանյութերի, ներքին հարդարման նյութերի և պարագաների, էլեկտրոնային մուտքի համակարգի համար անհրաժեշտ հաշվիչ սկաներների, ծրագրային սարքավորումների, սերվերների, տպիչ սարքերի և տեսահսկման համակարգի համար· անհրաժեշտ տեսախցիկների և սարքավորումների ներմուծում՝ 201,000,000 դրամ,<br>- Էլեկտրոնային մուտքի ու տեսահսկման համակարգերի համար անհրաժեշտ սկաներների, սերվերների, տպիչ սարքերի, սարքավորումների և տեսախցիկների ձեռքբերում, տեղադրում և կարգաբերում՝ 22,557,790 դրամ,<br>- Մամուլի կենտրոնի վերակառուցում, վերանորոգում և կահավորում՝ 34,520,200 դրամ,<br>- Մետաղական դռների, դարպասների, ցանկապատերի, լուսավորության սյուների պատրաստում և տեղադրում, մետաղական կոնստրուկցիաների պատրաստում և մետաղական մակերեսների փոշեներկում 31,150,400 դրամ,<br>- Դրամարկղի տանիքի երեսպատում և անձրևատարների պատրաստում՝ 2,458,270 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում [illegible] համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության [illegible] ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության [illegible] ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1197-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-094-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/22116-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21708-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի նոյեմբերի 5-ի N 047 և նոյեմբերի 25-ի N 057 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցվող բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 8-րդ կետում «2014 թվականի դեկտեմբեր» բառերը փոխարինել «2016 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով.

2) 9-րդ կետի 3-րդ ենթակետում «մինչև 2014 թվականի մայիսի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2015 թվականի օգոստոսի 31-ը» բառերով.

3) 9-րդ կետի 4-րդ ենթակետում «մինչև 2011 թվականի մայիսի 1-ը» բառերը փոխարինել «2015 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով.

4) 9-րդ կետի 5-րդ ենթակետում «մինչև 2014 թվականի հոկտեմբերի 15-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով.

5) 9-րդ կետի 6-րդ ենթակետում «մինչև 2014 թվականի հոկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1198-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/22120-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21711-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի նոյեմբերի 25-ի N 058 գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 8-րդ կետում «2014 թվականի դեկտեմբերի 01-ը» բառերը փոխարինել «2016 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերով.

2) 9-րդ կետի 3-րդ ենթակետում «մինչև 2014 թվականի հուլիսի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2015 թվականի նոյեմբերի 30-ը» բառերով.

3) 9-րդ կետի 4-րդ ենթակետում «մինչև 2013 թվականի օգոստոսի 31-ը» բառերը փոխարինել «2015 թվականի օգոստոսի 31-ը» բառերով.

4) 9-րդ կետի 5-րդ ենթակետում «մինչև 2014 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի հուլիսի 31-ը» բառերով.

5) 9-րդ կետի 6-րդ ենթակետում «մինչև 2014 թվականի դեկտեմբերի 01-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1199-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/22687-14 և դեկտեմբերի 11-ի N 06/5-1/22833-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 5-ի N ՖՐ/ԱՆՄ-4/9933-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օրացույցները և բացիկները (6 տեղ, 2,460 կգ ընդհանուր քաշով, 16,411 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,500 շվեյցարական ֆրանկ, «ՄԾՓ» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա և 2014 թվականի ապրիլի 4-ի N Մ-257-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը (Շվեյց. ֆրանկ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Օրացույցներ, բացիկներ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 40 | 340 |
| | | | Այգուտ | 164 | 88 | 753 |
| | | | Մարտունի | 73 | 39 | 335 |
| | | | Դպրաբակ | 81 | 44 | 372 |
| | | | Վահան | 188 | 101 | 863 |
| | | | Կալավան | 23 | 12 | 106 |
| | | | Բարեպատ | 6 | 3 | 28 |
| | | | Ջորավանք | 31 | 17 | 142 |
| | | | Անտառամեջ | 22 | 12 | 101 |
| | | | Գավառ | 61 | 33 | 280 |
| | | | Թթուջուր | 81 | 44 | 372 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 27 | 234 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 9 | 78 |
| | | | Արտաշատ | 16 | 9 | 73 |
| | | | Գետազատ | 39 | 21 | 179 |
| | | | Մրգանուշ | 16 | 9 | 73 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 7 | 60 |
| | | | Սևաբերդ | 41 | 22 | 188 |
| | | | Ջրառատ | 18 | 10 | 83 |
| | | | Արզական | 38 | 20 | 175 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 26 | 220 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 8 | 69 |
| | | | Իջևան | 18 | 10 | 83 |
| | | Երևան | | 3201 | 1725 | 14,702 |
| | Ընդամենը | | | 4335 | 2340 | 19,911 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն Հ. Ղազարյան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1200-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/22688-14 և դեկտեմբերի 11-ի N 06/5-1/22829-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված էլեկտրական հոսանքի անջատիչները, վարդակները և դրանց մասերը (մեկ տեղ, 33.76 կգ ընդհանուր քաշով, 3,998.70 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 800 եվրո փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ377-Ա և հուլիսի 18-ի N Մ-680-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1201-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/22953-14 և դեկտեմբերի 12-ի N 06/5-1/22944-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված քիմիական թելերից հատակի ծածկույթը (1,500 քառ. մետր՝ 27 տեղ, 2,031 կգ ընդհանուր քաշով, 16,560 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 527,000 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1202-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/22992-14 և դեկտեմբերի 8-ի N 06/3-3/22429-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա և 2014 թվականի ապրիլի 4-ի N Մ-257-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լոնդոն բիզնես գրուպ» համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01223655) 2014 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2014 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության իրականացում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1203-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 12-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N 07/80-2/23628-14 և դեկտեմբերի 18-ի N 06/3-3/23818-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա և 2014 թվականի ապրիլի 4-ի N Մ-257-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բրոկկոլի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02632412) 2014 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N 11/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի մատակարարում՝ 60 մլն դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**20 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1204-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 12-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/22991-14 և դեկտեմբերի 10-ի N 06/3-3/22735-14 եզրակացությունները, ինչպես նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա և հուլիսի 18-ի N Մ-680-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 10-րդ կետի 5-րդ ենթակետում «1,036,129,594 դրամ» և «697,340,000 դրամ» բառերը համապատասխանաբար փոխարինել փոխարինել «1,256,129,594 դրամ» և «477,340,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«ՍԵՐՎԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02542669) 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N I-20141124 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմատացված դարպասների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4,106,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1205-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 07/80-2/22809-14 և դեկտեմբերի 10-ի N 06/3-3/22736-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատնկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-681-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2014 թվականի նոյեմբերի 21-ին կնքված՝ N 633 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի արտադրության «Toyota Hilux» մակնիշի կիսաբեռնատար ավտոմեքենայի ձեռքբերում՝ 10,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1206 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N Մ-471-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 18-ի N 07/80-2/20475-14 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/20521-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 23-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին» N Մ-471-Ա որոշմամբ (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-869-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2014 թվականի նոյեմբերի 5-ին կնքված N 131-Լ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի մատակարարում՝ 16,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1207 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/21171-14 և դեկտեմների 1-ի N 06/5-1/21701-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի N ՖԲ/ԱնՄ-4/9557-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Բավարիայի երկրամասի Կարմիր խաչի կողմից «Ստեփանավան» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի՝ (13,740 կգ ընդհանուր քաշով, 50,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,764 եվրո, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը (բեռի բաշխման ցանկը և մասնացուցակը կցվում են):

2. «Ստեփանավան» բարեգործական հիմնադարմին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումները ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Ստեփանավանի քաղաքապետին:

Ն...

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

«Ստեփանավան» բարեգործ. հիմնադրամ անունով N 2014/33/65416 փոխադրման ամփոփագրով ստացված բեռի նախնական զննման արդյունքներով

14/12.17

| Հ/Հ | Անվանումը | Բրուտտո կգ | Նետտո կգ | Քանակը ՀԱՏ | Տեղերի քանակը | Արժեքը Հ/Ա EUR | Ծագման երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ակնոցի իրան տուփով, օգտ. | 30 | 15 | 400 | 4 | 109 | Գերմանիա |
| 2 | խանձարուր | 755 | 615 | | 148 | 2748 | Գերմանիա |
| 3 | հագուստ և անկողնային պարագաներ օգտագ. | 873 | 800 | | 45 | 2912 | Գերմանիա |
| 4 | վարագույր սինթետիկ գործվածքից, ներկած | 284 | 260 | | 6 | 1034 | Գերմանիա |
| 5 | քիվեր վարագույրի համար, օգտ. | 560 | 500 | | 1 | 2038 | Գերմանիա |
| 6 | բաճկոն | 290 | 263 | 375 | 24 | 1056 | Գերմանիա |
| 7 | մանկական վերմակներ սինթետիկ գործվածքից | 48 | 43 | 104 | 4 | 175 | Գերմանիա |
| 8 | օճառ մանկական | 190 | 160 | | 20 | 692 | Գերմանիա |
| 9 | ձեռնոցներ պոլիէթիլենից | 15 | 5 | 25 | 5 | 55 | Գերմանիա |
| 10 | պայուսակներ տեքստիլ նյութերից | 38 | 32 | 120 | 6 | 138 | Գերմանիա |
| 11 | փափուկ խաղալիք | 96 | 80 | 360 | 10 | 350 | Գերմանիա |
| 12 | կոճակ պլաստմ. | 15 | 10 | | 3 | 54 | Գերմանիա |
| 13 | կենցաղային կշեռքներ | 37 | 30 | 18 | 2 | 135 | Գերմանիա |
| 14 | կերամիկական սպասք (թեյի բաժակներ, ապուրի բաժակներ) | 612 | 544 | 1836 | 51 | 2228 | Գերմանիա |
| 15 | մերսող սարքեր | 190 | 170 | 60 | 5 | 692 | Գերմանիա |
| 16 | էլ. տաքացվող բարձիկներ | 87 | 70 | 110 | 6 | 317 | Գերմանիա |
| 17 | էլեկտրական վերմակներ | 403 | 340 | 165 | 7 | 1467 | Գերմանիա |
| 18 | մակարոնի արտադրանք | 3240 | 3000 | | 86 | 11790 | Գերմանիա |
| 19 | ներկ ջրում լուծվող | 5724 | 5615 | 216դույլ | 216 | 20835 | Գերմանիա |
| 20 | հեծանիվներ օգտագ. | 60 | 55 | 3 | 3 | 210 | Գերմանիա |
| 21 | հաշմանդամի սայլակ օգտագ. | 30 | 30 | 2 | 2 | 110 | Գերմանիա |
| 22 | Սառցարան BOSCH GSN36VI30 237լ, օգտագ. | 38 | 38 | 1 | 1 | 190 | Գերմանիա |
| 23 | Սառնարան սառցարան BOSCH KDN46AW20U 369լ, օգտագ. | 80 | 80 | 1 | 1 | 450 | Գերմանիա |
| 24 | Սառնարան սառցարան BOSCH KGV39VL31S 344լ, օգտագ. | 45 | 45 | 1 | 1 | 215 | Գերմանիա |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13740 | 12800 | | 657 | 50000 | Գերմանիա |

«Ստեփանավան» ԲՀ ... տնօրեն ... Գ. Շահբազյան

14.11.14թ.

Հաստատում եմ
«Ստեփանավան» ԲՀ հոգաբարձուների խորհրդի
նախագահ
Մ. Ղարաքեշիշյան

20.11.2014թ.

«Ստեփանավան» ԲՀ հասցեով ներմուծված ապրանքների բաշխման ցուցակ

| | Անվանումը | Չափի միավոր | Քանակը հատ | Արժեքը EUR | Բրուտտո քաշ | Ստացող |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ակնոցի իրան տուփով,օգտ. | արկղ | 4 | 109 | 30 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |
| 2 | Խանձարուր | արկղ | 148 | 2748 | 755 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |
| 3 | Հագուստ և անկող.պարագաներ օգտ-ծ | արկղ | 45 | 2912 | 873 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |
| 4 | Վարագույր սինթետիկ գործվածքից,նեղ | արկղ | 6 | 1034 | 284 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին,Ստեփանավանի գրադարանին, Ստեփանավանի մշակույթի պալատին |
| 5 | Քիվեր վարագույրի համար,օգտ-ծ | արկղ | 1 | 2038 | 560 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին,Ստեփանավանի գրադարանին, Ստեփանավանի մշակույթի պալատին |
| 6 | Բաճկոն | արկղ | 24 | 1056 | 290 | Ստեփանավանի քաղաքապետարան, Ստեփանավանի նոր կառուցվող եկեղեցի և մանկապարտեզ |
| 7 | Մանկ[illegible]ներ ս[illegible] | արկղ | 4 | 175 | 48 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին |
| 8 | Օճառ մ[illegible] | արկղ | 20 | 692 | 190 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին |
| 9 | Ձեռնոցներ պոլիէթիլենից - 25 հատ | արկղ | 5 | 55 | 15 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններ,Ստեփանավանի մարզադպրոց |
| 10 | Պայուսակներ տեքստիլ նյութերից | արկղ | 6 | 138 | 38 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |
| 11 | Փափուկ խաղալիք | արկղ | 10 | 350 | 96 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին |
| 12 | Կոճակ պլաստմասե | արկղ | 3 | 54 | 15 | Ստեփանավանի մշակույթի պալատ |
| 13 | Կենցաղային կշեռքներ | արկղ | 2 | 135 | 37 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններ,Ստեփանավանի մարզադպրոց |
| 14 | Կերամիկական սպասք/թեյի բաժակ,ապուրի բաժակ/ - 1836 հատ | արկղ | 51 | 2228 | 612 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին |
| 15 | Մերսող սարքեր - 60 հատ | արկղ | 5 | 692 | 190 | Ստեփանավանի մարզադպրոց |
| 16 | Էլ. տաքացնող բարձիկներ - 110 հատ | արկղ | 6 | 317 | 87 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |
| 17 | Էլեկտրական վերմակներ | արկղ | 7 | 1467 | 403 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |
| 18 | Մակարոնի արտադրանք | արկղ | 86 | 11790 | 3240 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին |
| 19 | Ներկ ջրում լուծվող - 216 դույլ | արկղ | 216 | 20835 | 5724 | Ստեփանավանի համայնք/ քաղաքի բարեկարգում/ |
| 20 | Հեծանիվներ օգտագործված | արկղ | 3 | 210 | 60 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 21 | Հաշմանդամի սայլակ օգտ-ծ | արկղ | 2 | 110 | 30 | Ստեփանավանի անապահով ընտանիքներին |
| 22 | Սառցարան BOSCH GSN36V130 237լ,օգտ | արկղ | 1 | 190 | 38 | Ստեփանավանի թիվ 1 մանկապարտեզ |
| 23 | Սառնարան սառցարան BOSCH KDN46AW20U 369լ,օգտ | արկղ | 1 | 450 | 80 | Ստեփանավանի թիվ 3 մանկապարտեզ |
| 24 | Սառնարան սառցարան BOSCH KGV39VL31S 344լ,օգտ | արկղ | 1 | 215 | 45 | Ստեփանավանի թիվ 4 մանկապարտեզ |
| | Ընդամենը | | | 50000 | 13740 | |
| | | | | | | |
| | | | | | | |

«Ստեփանավան» ԲՀ տնօրեն Գ.Շահ...

14/12/17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1208-Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ («ՀԿ» ԲՀԿ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԿ ԲՀԿ ԳՅՈՒՄՐՈՒ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 5-ի N 07/80-2/22388-14 ու դեկտեմբերի 4-ի N 06/3-3/22285-14 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9576-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N 01/5786-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 4,497,250 դրամ ընդհանուր արժեքով ««ՀԿ» ԲՀԿ Գյումրու գրասենյակի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2014 թվականի նոյեմբերի 24-ին կնքված՝ N 169/RHS/14/11/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Գյումրու գրասենյակի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 4,497,250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշման պատճենը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Գագիկ Տարասյանի կողմից
«25» նոյեմբերի, 2014թ.

ՀԿ ԲՀԿ Գյումրու գրասենյակի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Իրականացնել գրասենյակի ջեռուցման համակարգի հիմնավոր վերանորոգման աշխատանքներ. d 25մմ խողովակաշարի 220 մ և d 20 մմ խողովակաշարի 200 մ հատվածի մոնտաժում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն |
| 3 | Բարեգործը | ԱՄՆ Կաթողիկե Եպիսկոպոսների համագումար<br>**3211 4th Street, NE, Washington, DC 20017, USA** |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., տուն 8<br>ՀՎՀՀ 05514397 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Գյումրի, «Հայկական Կարիտաս» Գյումրու գրասենյակ<br>բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | 4.497.250 դրամ առանց ԱԱՀ-ի |
| 7 | Բարեգործություն ստացողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Տնային խնամք միայնակ ծերերին», «Պատուհան դեպի աշխարհ», «Առողջության առաջնային պահպանման կենտրոն», «ՄԻԱԿ/ՋԻԱՀ-ի կանխարգելումը ՀՀ ՇՄ 60 գյուղական համայնքներում» և գործող այլ ծրագրերի անձնակազմ և շահառուներ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2 ամիս, դեկտեմբեր 15, 2014 - փետրվար 15, 2015 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է d 25մմ խողովակաշարի 220 մ և d 20 մմ խողովակաշարի 200 մ հատվածի մոնտաժում:<br>Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 4.497.250 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծրագիրն իրականացվելու է 2014թ. դեկտեմբեր- 2015թ. փետրվար ամիսներին: |

14/16

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն 220 մ d25մմ և 200 մ d20մմ խողովակներ, 2 կաքսա, 270 հատ H50սմ և 220 հատ H60սմ մարտկոցներ, կոցտագործվի մասնագիտական ու բանվորական աշխատանք: Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 4.497.250 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չկան: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Անմիջական համագործակցություն կիրականացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով: |

COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA * CHARITABLE PROGRAMS * 02508251

Caritas Benevolent Organization * 09514397

14/6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1209 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/21163-14 ու նոյեմբերի 27-ի N 06/5-1/21423 -14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 21-ի N ԱՄ/22.2/12324-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Роспотребнадзор) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Ռոսպոտրեբնադզոր»-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (թեստ-հավաքածուներ՝ 3 տեղ, 10.5 կգ. քաշով, 60,575.44 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1210 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 07/80-2/21499-14 ու դեկտեմբերի 2-ի N 06/5-1/21955-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N ԱՄ/22.2/12570-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Роспотребнадзор) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Ռոսպոտրեբնադզոր»-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (ախտորոշիչ նյութերի հավաքածուներ (BD FACSCount հոսքային ցիտոֆլյուորիմետրի համար)՝ 3 տեղ, 30.1 կգ. ընդհանուր քաշով, 56,153 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1211 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/21796-14 ու դեկտեմբերի 3-ի N 06/5-1/22020-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դկտեմբերի 2-ի N ԱՄ/22.2/12734-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Роспотребнадзор) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Ռոսպոտրեբնադզոր»-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում ստացված բեռների (թեսթ-հավաքածուներ (ДЦ-ИФА-НБsAg և ИФА-НБsAg)՝ 2 տեղ, 53 կգ ընդհանուր քաշով, 62,208 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Չվարթնոց» ՄՏ և թեսթ-հավաքածուներ (ДС-ИФА-АНТИ-НСV)՝ 2 տեղ, 38.30 կգ ընդհանուր քաշով, 19,046.4 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ)ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-** 1212 **-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/21064-14 և նոյեմբերի 27-ի N 06/5-1/21436-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռը՝ ալյումինե պրոֆիլներ, երկշերտ ապակի և դրանց ֆիքսման մետաղական դետալներ, ներկերի օրգանական լուծիչներ (271 տեղ, 9,714 կգ ընդհանուր քաշով, 26,232.83 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա և 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1047-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1213-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)(1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/21060-14 և նոյեմբերի 27-ի N 06/5-1/21393-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռը՝ (9,356.45 կգ ընդհանուր քաշով, 76,224.46 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,950 եվրո, ցանկը կցվում է, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա և 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1047-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՄԱՍՆԱՑՈՒՅՑ

2014 / 22 / փոխադրման ամփոփագրով

ներմուծված ապրանքներ

| *N* | *Ապրանքի անվանում* | *Տեղ* | *Քաշ Բրուտո (կգ)* | *Քաշ Նետտո (կգ)* | *Invoice N* |
|---|---|---|---|---|---|
| 1 | Փայտյա տախտակներ 35/75/1000մմ և 20/110/1000մմ | 1405 | 1520 | 1500 | 06-114511 |
| 2 | Մանրահատակի մշակման առանձանյութեր (ակրիլի, սիլիկոնի հիմքերով) և լակնյութեր | 141 | 842 | 780 | |
| 3 | Կենտրոնի ներքին և արտաքին ջրասնուցման և ջրահեռացման խողովակներ և պարագաներ (մետաղ, պլաստիկ) | 725 | 490 | 402.6 | |
| 4 | Մանրահատակի հղկեցման էլեկտրական գործիք LAGLER HUMMEL 2.2 KW | 1 | 79 | 45 | |
| 5 | Մանրահատակի մշակման և հղկեցման պարագաներ | 1157 | 370.45 | 302.2 | |
| 6 | Փայտա պատերին տուֆե սալիկների ֆիքսման ալյումինե ուղղորդիչ պրոֆիլների և ալյումինե դետալների հավաքածու | 21936 | 2055 | 1778 | |
| 7 | Ցեմենտ ավազե սոսնձանյութ | 5 | 150 | 148 | 4069 |
| 8 | FHE FRANKE արտադրության խոհանոցային մետաղական կահույք | 23 | 3285 | 2990 | |
| 9 | Շոգեխաշման վառարան LAINOX MVE 071p | 1 | 30 | 25 | |
| 10 | Գրիլ տեխնոլոգիայով եփող վառարան Olis 72/10 PLG | 1 | 95 | 80 | |
| 11 | Սպասքի լվացման մեքենա ecomax Hobart 502-10 | 1 | 132 | 120 | |
| 12 | Սառեցման խցիկ COLDLINE A70/1NE 610լ | 2 | 308 | 250 | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 25398 | 9356.45 | 8420.8 | |

Մասնացուցակը կազմեց ՆՀՎ Շիրակի բաժնի տեսուչ՝ Վ. Միրզոյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1214-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն) (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/21061-14 և նոյեմբերի 27-ի N 06/5-1/21394-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռը՝ (2,102 տեղ, 8,836.2 կգ ընդհանուր քաշով, 102,779.42 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6,200 եվրո, ցանկերը կցվում են, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա և 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1047-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

2014/22/11995 փոխադրման ամփոփագրով

ներմուծված ապրանքներ

| N | Ապրանքի անվանում | Տեղ | Քաշ բրուտո (կգ) | Քաշ նետտո (կգ) | CMR N/ Ինվոյս N |
|---|---|---|---|---|---|
| 1 | Պլաստմասյա պատուհանափեղկ | 1 | 40 | 36 | 1078/ KF20141021 |
| 2 | Երկաթյա մեխանիկական հավաքվող դուռ 2000*2100մմ | 1 | 81 | 72.9 | inv7388 |
| 3 | Եղևնու փայտից տախտակներ 29*95*4500մմ | 45 | 251 | 225.9 | 1083/ 0076/14 |
| 4 | Մեխանիկական կառավարվամբ մահճակալ | 2 | 280 | 252 | 1082/ 14/891 |
| 5 | Bona և ILLER հղկող թղթեր տարբեր չափսերի | 157 | 45 | 40 | 1080/ 311578 |
| 6 | Մետաղական կցորդիչներ տարբեր տրամաչափերի | 36 | 16 | 14 | 1079/ 07-115082 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 242 | 713 | 640.8 | |

Մասնացուցակը կազմեց ՆՀՎ Շիրակի բաժնի տեսուչ Ա. Միրզոյանը

## ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

2014/22/11997 փոխադրման ամփոփագրով

ներմուծված ապրանքներ

| N | Ապրանքի անվանում | Տեղ | Քաշ բրուտո (կգ) | Քաշ նետտո (կգ) | CMR N/ Ինվոյս N |
|---|---|---|---|---|---|
| 1 | Փայտյա սեղաններ և աթոռներ Hussl | 155 | 2300 | 2070 | 1077/ RVR18938 |
| 2 | Երկաթյա թիթեղային կախույք | 12 | 962 | 865.8 | 1081/4093 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 167 | 3262 | 2935.8 | |

Մասնացուցակը կազմեց ՆՀՎ Շիրակի բաժնի տեսուչ Վ. Միրզոյանը

## ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

2014/22/11999 փոխադրման ամփոփագրով

ներմուծված ապրանքներ

| N | Ապրանքի անվանում | Տեղ | Քաշ բրուտո (կգ) | Քաշ նետտո (կգ) | CMR N/ Ինվոյս N |
|---|---|---|---|---|---|
| 1 | Փայտյա դռներ և դռնափեղկեր տարբեր չափսերի (եղևնի/կաղնի) | 453 | 1720 | 1548 | 1075/ VR638445-VR638463 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 453 | 1720 | 1548 | |

Մասնացուցակը կազմեց ՆՀՎ Շիրակի բաժնի տեսուչ Վ. Միրզոյանը

ՄԱՄՆԱՑՈՒՑԱԿ

2014/22/12000 փոխադրման ամփոփագրով

ներմուծված ապրանքներ

| *N* | *Ապրանքի անվանում* | *Տեղ* | *Քաշ բրուտո (կգ)* | *Քաշ նետտո (կգ)* | *CMR N/ Ինվոյս N* |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հիվանդի տեղափոխման մեխանիկական բարձակ աթոռ (երկաթյա) | 1 | 61 | 53 | 1084/deed of donation/invoice 28.10.2014 |
| 2 | Թերապևտիկ մետաղական սեղան | 1 | 98 | 88 | |
| 3 | Լոգարանային պլաստիկ խցիկներ | 2 | 280 | 240 | |
| 4 | Դաշնամուր A.Kraus Wien | 1 | 326 | 300 | |
| 5 | Սիլիկոնային սոսինձ | 8 | 80 | 71 | |
| 6 | Բամբակյա ծածկոցներ | 800 | 960 | 870 | |
| 7 | Ֆիզիոթերապևտիկ մահճակալ մետաղական | 1 | 90 | 81 | |
| 8 | Տպագրական թուղթ A4 | 2 | 46 | 43 | |
| 9 | Աստիճան մետաղական | 1 | 30 | 28 | |
| 10 | Մանկական անվասայլակ | 2 | 30 | 30 | |
| 11 | Պլաստիկ աթոռ | 2 | 18 | 16 | |
| 12 | Մանկական ուսապարկեր (սինթետիկ կտոր) | 300 | 126 | 106 | |
| 13 | Երաժշտական հարվածային ստեղնաշար (փայտ, մետաղ) | 1 | 105 | 89 | |
| 14 | Ստվարաթղթե արկղեր | 49 | 9 | 9 | |
| 15 | Սոսնձման ժապավեն և ձեռքի հարմարանք | 12 | 14.2 | 12.2 | |
| 16 | Մանկական բամբակյա հագուստ | 52 | 823 | 749.9 | |
| 17 | Սինթետիկ կավրոլիտ 16,77մ.քառ. | 5 | 45 | 41 | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 1240 | 3141.2 | 2827.1 | |

Մասնացուցակը կազմեց ՆՀՎ Շիրակի բաժնի տեսուչ Վ. Միրզոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1215-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն) (3)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 07/80-2/20491-14 և նոյեմբերի 21-ի N 06/5-1/20780-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռը՝ կառույցի լուսավորվածության էլեմենտների մասեր, լուսավորման սարքեր, սանհանգույցի ջրանուցման և ջրահեռացման մետաղական պարագաներ, կաղնու փայտից մանրահատակ, փայտե շինարարական վահանակներ և փայտյա կտրվածքներ, մանրահատակի ամրացման սոսնձանյութ, ձեռքի մեխանիկական գործիքներ, պլաստմասե ջրա և ջերմամեկուսիչ էլեմենտներ, պղնձե մալուխներ, փայտե պատուհաններ (1892 տեղ, 16,072.18 կգ ընդհանուր քաշով, 70,176.19 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,100 եվրո, ՄԾՓ ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա և 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1047-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1216 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/21482-14 և դեկտեմբերի 1-ի N 06/5-1/21790-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N ԱՄ/22.2/12560-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 2 արկղ, 3.4 կգ քաշով, 1,176 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 142.78 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-12/7 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/22689-14 և դեկտեմբերի 9-ի N 06/18-4/22551-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 08-ի N ԱՄ/22.2/13055-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի«Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է);

2. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Բելգիայից ստացված բեռը (դեղորայք և լաբորատոր նյութեր՝ 195 տեղ, 3,072 կգ. քաշով, 72,577.89 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 10,179.2 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի

ղեկավար՝ Ա. Ձեյթունի կողմից

**«Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը ՀՀ-ում»**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | ▪ Բարելավել ընգույսար և դեղորայքակայուն տուբերկուլոզի դեպքերի հայտնաբերման գործընթացը:<br>▪ Առաջարկել դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների որակյալ բուժում՝ հիմնվելով համապարփակ հիվանդակենտրոն մոտեցման վրա և օգտագործելով նորաշխավորված որակով դեղորայք:<br>▪ Բարելավել վարակի վերահսկման քաղաքականությունն ու փորձը՝ առողջապահական հաստատություններում տուբերկուլոզի տարածումը կրճատելու նպատակով:<br>▪ Բարելավել ընգույսար և դեղորայքակայուն տուբերկուլոզի բուժման հետևողականությունը և կրճատել բուժման ընդհատումների քանակը: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի տուրքերի և մաքսային վճարումների գծով սահմանված արտոնություններից: |
| 3. Բարեգործը | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միություն<br>Ֆրանսիա, Փարիզ 75011, Սեն-Սաբեն փ. 8 |
| 4. Ծրագրի կատարող | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 53բ, ՀՎՀՀ 01538594/ հեռ.՝ (010) 27 60 22) |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Առողջապահական բնագավառ<br>Երևանի քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսեր և Երևան քաղաքի տուբերկուլոզի կաբինետներ, Աբովյան քաղաքի հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր, Քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների հիվանդանոց, Լեռնային Ղարաբաղի, Շիրակի, Լոռու, Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերի ՏԲ կաբինետներ և ինֆեկցիոն հիվանդանոցներ՝ համագործակցելով Առողջապահության նախարարության /Տուբերկուլոզի ազգային ցրասենյակի հետ: |
| 6 Ծրագրի բյուջեն | Ընդամենը՝ 1,128,043,916 ՀՀ Դրամ<br>2013- 412,706,428 ՀՀ Դրամ<br>2014- 381,610,198 ՀՀ Դրամ<br>2015- 333,727,290 ՀՀ Դրամ |
| 7 Շահառուները (բարեգործություն ստացողները) | Տուբերկուլոզով, ոչ տուբերկուլոզային միկոբակտերիայով* և դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներ և բնտանիքները |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | 1-ը հունվարի, 2013թ. մինչև 31-ը դեկտեմբերի, 2015թ. |

| | |
|---|---|
| 9. Ծրագրի գործողությունների նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցները | Ծրագրի սկզբից /2005 թ./ մինչև 2012 թվականի նոյեմբեր ամիսը ԲԱՍ-ը և Տուբերկուլոզի Ազգային Գրասենյակ ՊՈԱԿ-ը դեղորայքակայուն տուբերկուլոզի բուժման մեջ են ընդգրկել 972 հիվանդ: «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը ՀՀ-ում» ծրագրով 2013թ հունվարի 1-ից մինչև 2015թ դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար նախատեսվում է Տուբերկուլոզի Ազգային Գրասենյակ ՊՈԱԿ–ի հետ համատեղ բուժել հիվանդների ներքոնշյալ քանակությունը. |

| Կարգավիճակ | Դեղորայքակայուն տուբերկուլոզ | Ռեզիստար տուբերկուլոզ | Ոչ-տուբերկուլյոզային միկոբակտերիում |
|---|---|---|---|
| Բուժման մեջ գտնվող հիվանդներ | 225 | 450 | 3 |
| Լրացուցիչ հիվանդներ 3 տարվա ընթացքում | 750 | 3000 | 40 |
| Հիվանդների ընդհանուր թիվը | 975 | 3450 | 43 |

| | |
|---|---|
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր | Ընդամենը՝ 648,900,000 ՀՀ Դրամ<br><br>2013- 158,900,000 ՀՀ Դրամ<br>2014 – 260,000,000 ՀՀ Դրամ<br>2015 – 230,000,000ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ ՀՀ Առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բուժ. աշխատակազմերի վերապատրաստում, տեղեկատվություն, տեղեկացվածության և կոմունիկացիոն ծախսեր<br>2013թ Հայաստանում 5 վերապատրաստում<br>Հայաստանից դուրս 4 վերապատրաստում<br>2014թ Հայաստանում 5 վերապատրաստում<br>Հայաստանից դուրս 4 վերապատրաստում<br>2015թ Հայաստանում 5 վերապատրաստում<br>Հայաստանից դուրս 4 վերապատրաստում | Ընդամենը՝ 28,641,000 ՀՀ Դրամ<br><br>2013- 9,547,000 ՀՀ Դրամ<br>2014- 9,547,000 ՀՀ Դրամ<br>2015- 9,547,000 ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ խիստ նպատակաուղղված ֆինանսական աջակցություն ՀՀ Առողջապահության նախարարության կառույցի աշխատակազմ ապահովելու համար, որն ընդգրկված չէ Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի բազմադեղորայքակայուն տուբերկուլոզի բաժանմունքի համար նախատեսված տարեկան բյուջեում | Ընդամենը՝ 6,622,230 ՀՀ Դրամ<br><br>2013- 6,622,230 ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդների համար | Ընդամենը՝ 43,742,000 ՀՀ Դրամ<br><br>2013- 15,622,000 ՀՀ Դրամ<br>2014- 14,060,000 ՀՀ Դրամ<br>2015- 14,060,000 ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ հավելյալ սնունդ խոցելի հիվանդների համար՝ ապահովելու բուժման նկատմամբ հետևողականություն | Ընդամենը՝ 26,036,000 ՀՀ Դրամ<br>2013- 15,622,000 ՀՀ Դրամ<br>2014- 5,207,000 ՀՀ Դրամ<br>2015- 5,207,000 ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար կազմակերպչական և գրասենյակային ծախսեր | Ընդամենը՝ 124,977,840 ՀՀ Դրամ<br>2013- 41,659,280 ՀՀ Դրամ<br>2014- 41,659,280 ՀՀ Դրամ<br>2015- 41,659,280 ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածում Ծրագրային նպատակների համար նախատեսվում է գնել կամ ներմուծել 7ավտոմեքենա<br>/ներկայումս ծրագիրն ունի 13 ավտոմեքենա. 2 -ը՝ կազմակերպչական աշխատակազմի համար և 11-ը՝ ծրագրային նպատակներով /հիվանդներին առնչվող/ շարժերի համար/<br>3 մեքենա<br>3 մեքենա<br>1 մեքենա | Ընդամենը՝ 98,940,790 ՀՀ Դրամ<br><br>2013- 49,700,000 ՀՀ Դրամ<br>2014- 32,890,000 ՀՀ Դրամ<br>2015- 16,350,790 ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ ավտոմեքենայի պահեստամասերի ձեռքբերում, փոխադրման և ընթացիկ պահպանման ծախսեր | Ընդամենը՝ 11,456,302 ՀՀ Դրամ<br><br>2013- 4,000,000 ՀՀ Դրամ<br>2014- 4,400,000 ՀՀ Դրամ<br>2015- 3,056,302 ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ շինարարական-վերանորոգման աշխատանքներ, ծառայություններ, նյութեր և սարքավորումներ Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի համար | Ընդամենը՝ 130,378,000 ՀՀ Դրամ<br><br>2013- 108,250,000 ՀՀ Դրամ<br>2014- 11,064,000 ՀՀ Դրամ<br>2015- 11,064,000ՀՀ Դրամ |
| **1-ը հունվարի 2013թ - 31-ը դեկտեմբերի 2015թ** ժամանակահատվածի համար՝ սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների (քլոր, ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպեր) ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր | Ընդամենը՝ 8,350,000 ՀՀ Դրամ<br><br>2013- 2,784,000 ՀՀ Դրամ<br>2014 - 2,783,000 ՀՀ Դրամ<br>2015 - 2,783,000 ՀՀ Դրամ |

| | | |
|---|---|---|
15/15.8/24031-11
15.12.2014թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1237 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/22239-14 և դեկտեմբերի 3-ի N 06/3-3/22103-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9577-14, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 02/07/3081-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N ՖԲ/ԱեՄ-4/9774-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 262,360 եվրո արժողությամբ «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի [illegible] արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության [illegible] նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և [illegible] նախարարություն:

ՆԱԽ[illegible] Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղար Անահիտ Բոյաջյանի [illegible] կողմից
«21» նոյեմբեր 2014թ.

## ԾՐԱԳԻՐ
Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել սիրիայից ժամանած փախստականների կենսապայմանների բարելավմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Ավստրիայի զարգացման գործակալությունը և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունը |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևան քաղաք և Հայաստանի Հանրապետության մարզեր, Միգրացիայի բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **262.360** Եվրո - առանց ԱԱՀ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 300 սիրիահայ ընտանիք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.11.2014 – 30.06.2015 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝<br>1. Խոցելի ընտանիքներին տրամադրել ամենօրյա օգտագործման անհրաժեշտ պարագաներ, այդ թվում նաև սնունդ, հիգիենիկ պարագաներ և այլն,<br>2. Քրոնիկ հիվանդություններ ունեցող շահառուներին (օրինակ՝ ասթմա, շաքարախտ, արյան բարձր ճնշում և այլն) տրամադրել դեղորայք,<br>3. Աջակցել թիրախային ընտանիքներին՝ բարելավելու իրենց կեցությունը և եկամտաբեր գործունեություն ծավալելու համար,<br>4. Պատրաստել Հայկական Կարմիր խաչի ընկերության աշխատակիցներին և կամավորներին՝ ծրագրի շահառուներին որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով:<br><br>Ծրագրի շրջանակներում ըստ ակնկալվող արդյունքների նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝ |

Ա.Վ./Ն

| | | |
|---|---|---|
| | | Ակնկալվող արդյունք 1<br>1.1. Վերանայել դիմումները և ընտրել շահառուներին /ժամանակահատված՝ 01-30.11 2014թ./:<br>1.2. Ձեռք բերել և իրականացնել հիգիենիկ ծանրոցների (ընդհանուր 7 ամիս), սննդային փաթեթների (ընդհանուր 6 ամիս) և կենցաղային իրերի (Հայաստան նոր ժամանած ընտանիքներին մեկ անգամ) ձեռք բերում և անվտանգ բաշխում /բյուջեն **189.700** եվրո, ժամանակահատված՝ 01.12.2014թ. – 15.06.2015թ./:<br>1.3 Կազմակերպել 200 շահառու երեխաներին կանխիկ գումարի բաշխում՝ դպրոցական պարագաների ձեռք բերման նպատակով / բյուջեն **10.000** եվրո, ժամանակահատված՝ 15-30.01.2015թ./:<br>1.4 Վերահսկել գործողությունները և պատրաստել հաշվետվություններ /ժամանակահատված՝ 01.11. 2014թ. – 30.06.2015թ./:<br><br>Ակնկալվող արդյունք 2<br>2.1. Վերանայել դիմումները և ընտրել քրոնիկ հիվանդություններ ունեցող շահառուներին /ժամանակահատված 15.11-30.12.2014թ./:<br>2.2. Ընտրել գործընկեր կազմակերպություն և շահառուներին տրամադրել կտրոններ՝ 70 քրոնիկ հիվանդություններ ունեցող շահառուների համար դեղորայք ձեռք բերելու նպատակով /բյուջեն **10.500** եվրո, ժամանակահատված՝ 08.01-15.06. 2015թ./:<br><br>Ակնկալվող արդյունք 3<br>3.1. Վերանայել դիմումները և ընտրել շահառուներին եկամտաբեր գործունեության խթանման համար /ժամանակահատված՝ 08.01-28.02.2015թ./:<br>3.2. Կազմակերպել բիզնեսի զարգացման և մասնագիտական դասընթացներ / բյուջեն **1.600** եվրո, ժամանակահատված՝ 01.03 – 15.04.2015թ./:<br>3.3 Տրամադրել մարկեթինգային աջակցություն շահառուների բիզնեսներին (տոնավաճառների և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով) համագործակցելով գործընկերների հետ / բյուջեն **4.000** եվրո ժամանակահատված՝ 20.04- 20.06.2015թ./:<br>3.4. Շահառուներին տրամադրել անհրաժեշտ սարքավորումներ իրենց բիզնեսը սկսելու համար /բյուջեն **29.400** եվրո, ժամանակահատված՝ 01.03 – 30.04.2015թ./:<br>3.5 Վերահսկել գործողությունները և պատրաստել հաշվետվություններ /ժամանակահատված՝ 01.11. 2014թ. – 30.06.2015թ./:<br><br>Ակնկալվող արդյունք 4<br>4.1. Ծրագրի շահառուներին որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով՝ կազմակերպել Հոգեբանա-սոցիալական և համակարգչային դասընթացներ ՀԿԽԸ աշխատակիցների և կամավորների համար / բյուջեն **1.000** եվրո ժամանակահատված՝ |



| | | |
|---|---|---|
| | | 01.12.2014- 30.04.2015թ./: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում 300 սիրիահայ ընտանիքների համար ձեռք է բերվելու սնունդ (6 ամիս) և հիգիենիկ պարագաների կապոցներ (7 ամիս), կենցաղային պարագաներ նոր ժամանած ընտանիքների համար, ընդհանուր 189.700 եվրո արժողությամբ: Քրոնիկ հիվանդություններ ունեցող շահառուներին տրամադրվելու է դեղորայք, ընդհանուր 10.500 եվրո արժողությամբ: Կազմակերպվելու է բիզնեսի զարգացման դասընթացներ և տրամադրվելու է մարկեթինգային աջակցություն տոնավաճառների և այլ միջոցառումների միջոցով, ընդհանուր 5.600 եվրո արժողությամբ: Կազմակերպվելու են դասընթացներ ՀԿԽԸ աշխատակիցների և կամավորների համար, ընդհանուր 1.000 եվրո արժողությամբ: Ծրագրի շահառու հանդիսացող 200 երեխաների տրամադրվելու գումար դպրոցական պարագաների ձեռք բերման համար, ընդհանուր **10.000** եվրո: Բիզնես սկսելու նպատակով շահառուների համար ձեռք է բերվելու և տրամադրվելու սարքավորումներ, ընդհանուր 29.400 եվրո արժողությամբ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ **16.160** եվրո, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ աշխատավարձերը, գնահատման իրականացման ծախսերը, լուսաբանող նյութերը, պահպանման և այլ ծախսեր՝ գրենական պիտույքներ, վառելիք, կապի, կոմունալ և ֆինանսական ծառայություններ (բանկային ծախսեր): |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Սփյուռքի նախարարության, Պետական միգրացիոն գործակալության, <<Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն>> ՀԿ-ի, <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության հետ սերտ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման, վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Ավստրիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է գործընկերների հետ սերտ համագործակցություն շահառուների ընտրման գործում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: |

* 02508251 *

15/15.8/21039-14
15.12.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1238 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 07/80-2/21623-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21704-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայնախագիծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01503291) 2014 թվականի հունվարի 8-ին կնքված N ՀԱ13ՀՀ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցուն կից մանկական գեղագիտական կենտրոնի շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ... КОМИССИЯ ПРАВИТЕЛЬСТВА РА ПО КООРДИНАЦИИ БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ПРОГРАММ * COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA CHARITABLE PROGRAMS * 02508251

15/15.8/21040-14
15.12.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1239 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-522-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/21156-14 և նոյեմբերի 24-ի N 06/3-3/21057-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» N Մ-522-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էկոնոմիկա և իրավունք տեղեկատվական հետազոտական կենտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00023529) 2014 թվականի նոյեմբերի 7-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իրականացնել բիզնես մեկնարկելու վերաբերյալ եռօրյա դասընթաց՝ 27 սիրիահայ մասնակիցների համար, երկու խմբով՝ բաղկացած 12 և 15 մասնակիցներից՝ 110,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21034-14
15.12.2014թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1240 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N Մ-308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի-ի N 3/3.8-2/1551-14 և նոյեմբերի-ի N ՎՄ/3-4/-1254-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի ապրիլի 26-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» N Մ-308-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրազդան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02596543) 2014 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի շրջանակներում ապահովել հյուրանոցային ծառայություն և ճաշի կազմակերպում՝ 356,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21031-14
15.12.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1241-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/23079-14 և N 06/5-1/22946-14 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Արաբական Միացյալ Էմիրություններից, ԱՀԹ-ի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու հավատացյալների հանգանակությամբ, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի հասցեով ստացված բեռի՝ խունկ (20 տեղ, 1050 կգ ընդհանուր քաշով, 8,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Խունկն օգտագործվելու է թեմի եկեղեցիներում ծիսական արարողությունների ընթացքում:

2. Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21032-14
15.12.2014թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1242 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/22433-14 և N 06/5-1/22501-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Արաբական Միացյալ էմիրություններից՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, անհատ բարերար Ավետիս Կիրկորովի կողմից Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի հասցեով ուղարկված բեռի՝ ձայնային տեխնիկա (4 տեղ, 131 կգ ընդհանուր քաշով, 5,585 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմին՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21047-14
15.12.2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1243 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/22683-14 և դեկտեմբերի 11-ի N 06/5-1/22828-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դուբայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ գրանիտե սալիկներ (16 տեղ, 33,530 կգ ընդհանուր քաշով, 55,845 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկեան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21045-14
15.12.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1244 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-1/22267-14 և դեկտեմբերի 8-ի N 06/5-1/22427-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆինլանդիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ գրքի թուղթ (44 տեղ, 14,767 կգ ընդհանուր քաշով, 8,393,665 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծիսական գրականության տպագրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21044-14
15.12.2014թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1245-Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/20913-14 և նոյեմբերի 27-ի N 06/5-1/21390-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ պտուտակ (47 կգ ընդհանուր քաշով, 1,178 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 200 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռները նախատեսված է Մայր Աթոռի տպարանի և «Արշիլ Գորկի» թանգարանի տանիքների վերանորոգման համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21046-14
15.12.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1246 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/20914-14 և նոյեմբերի 26-ի N 06/5-1/21229-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ պարաֆին (1,680 տեղ, 39,970 կգ ընդհանուր քաշով, 72,851.4 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը կազմել են 3200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռները նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/21053-14
15.12.2014թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1247 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԹԵՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի N 07/80-2/2007-14, և նոյեմբերի 12-ի N 06/3-3/19984-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 14-ի N 02/8826-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 8,214.095 դրամ արժողությամբ «Թեմական ներկայացուցչական ժողովի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00030747) 2014 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոնֆերանսի կազմակերպում՝ 8,214.095 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«07» 11 նոյեմբեր 2014թ.

Եպիսկոպոսական ժողովի կազմակերպման

14/3

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպել 2014թ. Թեմական Ներկայացուցչական ժողովը, ապահովելով ժողովականներին անհրաժեշտ պարագաներով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք, բնագավառը՝ հոգևոր: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 8,214,095 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 2014թ. Թեմական Ներկայացուցչական ժողովի մասնակիցները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 հոկտեմբերի 2014թ. – 25 նոյեմբերի, 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում Մայր Աթոռի տարածքում նոյեմբերի 11-13-ը կազմակերպել Թեմական Ներկայացուցչական ժողով և հոգալ կազմակերպական այլ հարցեր՝ ընդհանուր 8,214,095 ՀՀ դրամ գումարով, առանց ԱԱՀ:<br>Աշխատանքներն իրականացնում է «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00030747), ք. Երևան, Վարդանանց 4, պայմանագիր կնքված 24.09.2013թ.:<br>Ծրագիրը նախատեսված է իրականացնել 10 հոկտեմբերի 2014թ. – 25 նոյեմբերի, 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել հետևյալ ապրանքներն ու ծառայությունները. |

| | Անվանումը | քանակ | գին | օր | գումար |
|---|---|---|---|---|---|
| 1 | Պայուսակ | 170 | 9,850 | - | 1,674,500 |
| 2 | Նոթատետր | 170 | 950 | - | 161,500 |
| 3 | Գրիչ | 200 | 940 | - | 188,000 |
| 4 | Անվանացանկ | 320 | 600 | - | 192,000 |
| 5 | Պաստառի տպագրություն (4 մետր - լայնք, 3 մետր բարձրություն) | 1 | 96,000 | - | 96,000 |
| 6 | Բեյջ և բեյջի թել | 180 | 900 | - | 162,000 |
| 7 | Բարձրախոս | 6 | 4,450 | 3 | 80,100 |
| 8 | Սեղան | 80 | 2,900 | 3 | 696,000 |
| 9 | Սփռոց | 23 | 950 | 3 | 65,550 |
| 10 | Թղթապանակ | 170 | 850 | - | 144,500 |
| 11 | Սուրճի ընդմիջում | 340 | 2,750 | 3 | 2,805,000 |
| 12 | Ջուր | 210 | 900 | 3 | 567,000 |
| 13 | Դահլիճի ծաղկե ձևավորում | 1 | 200,000 | - | 200,000 |
| 14 | Ընտրելու գունավոր թղթեր | 510 | 200 | - | 102,000 |
| 15 | Սեղանի անվանաթուղթ | 205 | 700 | - | 143,500 |
| 16 | Սփռոց հատուկ | 57 | 5,400 | - | 307,800 |
| 17 | Ձայնային համակարգ | 2 | 38,500 | 3 | 231,000 |
| 18 | Անլար բարձրախոսներ | 6 | 7,200 | 3 | 129,600 |
| 19 | Ձայնային ձայնագրում | 1 | 28,800 | - | 28,800 |
| 20 | Ծառայության վճար | 3% | | | 239,245 |
| | Ընդամենը | | | | **8,214,095** |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ [illegible]ությունների հետ | Չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի [illegible] արդյունավետության [illegible] մեխանիզմները [illegible] | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

14/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1248 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/22011-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21707-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 02/9502-14, Հայաստանի Հանրա-պետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 01/07-1/14673-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի նոյեմբերի 28-ի N 101/106.2/5809-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 652,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2014 թվականի նոյեմբերի 21-ին կնքված՝ N ԱՎ-ՎՀ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սարքավորումների ձեռքբերում՝ 652,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«26» նոյեմբերի 2014թ.

**« ՀՀ Կրթության և գիտության նախարարության Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում »**

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել ՀՀ Կրթության և գիտության նախարարության Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցը անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր քաղաք, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 652.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության Հայաստանի |



| | | |
|---|---|---|
| | | պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ նոյեմբերի 21-ից մինչեւ 2014թ. դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Կրթության և գիտության նախարարության Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում (652.000,00 դրամ արժողությամբ) և անհատույց հանձնում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանից երեք համակարգիչների (չընդհատվող լարման աղբյուրներով) և մոնիտորների և մեկ բազմաֆունկցիոնալ տպիչի ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 652.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության ներքին վերահսկողության մեխանիզմի նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական
Արմինե Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1249 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 07/80-2/20645-14 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/20519-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 02/8939-14 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի նոյեմբերի 19-ի N 01.1/04.2/4074-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 330,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգման նախագծի փորձաքննություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2014 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N 71 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային փաստաթղթերի փորձաքննություն՝ 330,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«13» նոյեմբերի 2014թ.

**« Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգման նախագծի փորձաքննություն»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտների և ուսուցչական անձնակազմի աշխատանքի պայմանների բարելավմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգամանքություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 330.000,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտները և ուսուցիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հոկտեմբերի 10-ից մինչեւ 2014թ.դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ հոկտեմբերի 10-ից մինչեւ 2014թ.դեկտեմբերի 30-ը կատարել նախագծի փորձաքննություն՝ 330.000,00 դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից աշխատանքային նախագծի փորձաքննության իրականացում՝ 330.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիրի
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**12 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1250 -Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/22123-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21709-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 02/9503-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N ՖԲ/ԱնՄ-4/9705-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի դեկտեմբերի 1-ի N 101/104.3.2/5829-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 73,552,000 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ՝ 06940684)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (քաղ. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 19-ին կնքված N 4100004130122004271 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 2,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ -ի Լոռու կենտրոնի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի մարտի 14-ին կնքված N 510100708 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 670,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սպարապետ» ՍՊԸ -ի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ՝ 06915002) 2014 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 14-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդամթերքի և տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 16,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ -ի Լոռու ԳԳՄ-ի հետ (քաղ. Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 03108134348 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 4,135,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2014 թվականի նոյեմբերի 3-ին կնքված N 4-59 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 99,778 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00419022) 2014 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N ԱԾ-50 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի
տնօրեն Մ. Թևանյանի կողմից

«24» նոյեմբեր 2014թ.

Ամերիկայի Հայ Օգնության ֆոնդի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից 2015թ-ին իրականացվող

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վանաձորի տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք սննդամթերքի, տնտեսական ապրանքների արժեքի, հեռախոսակապի, սպառած գազի, զազապատման համակարգի տեխնիկական սպասարկման, էլեկտրաէներգիայի և տարեկան աուդիտի գծով մատուցված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ից ազատում 01.01.2015թ.-31.12.2015թ. ընթացքում: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Գևորգ և Միրվարդ Գարամանուկներ, Շահան Արծրունի |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ, հասցե՝ ք. Վանաձոր, Մայմեխի 8 , ՀՎՀՀ՝ 06940684 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայմեխի 8: Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 73 552 000 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձորի տարեցների տանը մշտապես բնակվող 55 սոցիալապես անապահով ծերեր: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2015թ – 31.12.2015թ, ծրագիրը շարունակական է: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հիմնադրամի խնամքի տակ գտնվող սոցիալապես անապահով տարեցների շուրջօրյա խնամքի կազմակերպում, դրա իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, տարեցների սոցիալական պահանջմունքների բավարարում, բազմատեսակ հետաքրքիր և մշակութային միջոցառումների իրականացում նրանց առօրյան հետաքրքիր դարձնելու համար, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում ողջ 2015թ տարվա ընթացքում, որը ներառում է նրանց խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ. տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը, այդ թվում<br>1. Տարեցների տանը բնակվող ծերերի համար նպաստավոր պայմանների ստեղծում՝ |

2

| | | |
|---|---|---|
| | | • Կոմունալ և կապի ծառայության ծախսեր՝ - 7 505 600 ՀՀ դրամ<br>• Շենքի շահագործման և պահպանման ծախսեր՝ - 624 000 ՀՀ դրամ<br>2. Տարեցների խնամքի, հիգենայի կազմակերպում, սոցիալական պահանջմունքների բավարարում, մշակութային միջոցառումների կազմակերպում, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում<br>• Սննդի, տնտեսական ապրանքների ձեռք բերում - 16 280 000 ՀՀ դրամ<br>• Հագուստի, անկողնային և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերում - 420 000 ՀՀ դրամ<br>• Տարեցների տունն սպասարկող տրանսպորտային միջոցների շահագործման և սպասարկման ծախսեր - 2 192 000 ՀՀ դրամ<br>• Խնամքի, սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) - 38 278 400 ՀՀ դրամ<br>3. Տարեցների առողջական վիճակի ամբողջական հետազոտությունների կազմակերպում, առաջնային բժշկական օգնության տրամադրում - 400 000 ՀՀ դրամ<br>4. Կազմակերպական ծախսեր - 7 852 000 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **Ակնկալում ենք ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից մատակարարված ապրանքների և ծառայությունների գծով ԱԱՀ-ից ազատում**<br>1. Օգտագործված գազի դիմաց ԱԱՀ-ից ազատում **4 135 600 ՀՀ** դրամի չափով 01.01.2015թ.-31.12.2015թ. ընթացքում /պայմանագիր N 03108134348, կնքված 01.08.2013թ. **«ՀայՌուսգազարդ»** ՓԲԸ-ի(Լոռու ԳԳՄ, ք. Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ 00046317) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>2. Գազապատման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 99 778 ՀՀ դրամի չափով 10.01.2015թ.-10.01.2016թ. ընթացքում՝ պայմանագիր N 4-59, կնքված 03.11.2014թ **«Էյ-Ի-Ջի-Սերվիս»** ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Արղևցի 10, ՀՎՀՀ 00930884) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>3. Սննդամթերքի և տնտեսական ապրանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 16 000 000 դրամի չափով 01.01.2015թ.-31.12. 2015թ. ընթացքում `պայմանագիր N 14-01, կնքված 10.11.2014թ. **Սպարապետ»** ՍՊԸ-ի(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ 06915002) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>4. Օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց ԱԱՀ-ից ազատում 2 600 000 դրամի չափով 01.01.2015թ.-31.12.2015թ. ընթացքում՝ պայմանագիր N 4100004130122004271, կնքված 19.03.2008թ. **«Հայաստանի էլեկտրական ցանցեր»** ՓԲԸ-ի Դեբեդ մասնաճյուղի (ՀՀ, ք. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ 01520882) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>5. Հեռախոսակապի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում 670 000ՀՀ դրամի չափով 01.01.2015թ-31.12.2015թ. ընթացքում՝ պայմանագիր N 510100708, կնքված 14.03.2008թ. **«Արմենտել»** ՓԲԸ-ի Լոռու կենտրոնի (ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ 02500052) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>6. Աուդիտի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում 300 000 ՀՀ դրամի չափով 01.01.2015-31.12.2015թ. ընթացքում՝ պայմանագիր կնքված 10.11.2014թ **«Աուդիտ Սերվիս»** ՍՊԸ–ի ( ՀՀ, Ք.Երևան, Հանրապետության 78/26, ՀՎՀՀ 00419022 ) և Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>Կից ներկայացվում են պայմանագրերի լուսապատճենները: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է - **7 852 000 ՀՀ դրամ** , ծրագրի ընդհանուր արժողության 10.7 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է ծրագրի ադմինիստրատիվ կազմի աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները, գործուղման, գրասենյակի համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռք բերման, համակարգչային սպասարկման, բանկային ծառայության և տարեկան աուդիտի անցկացման հետ կապված ծախսերը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, Լոռու մարզպետարան, Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի և Հայաստանյան գրասենյակի, «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի խորհրդի և եռամսյա, տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1251 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/22282-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21934-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9581-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 03/07-1/14806-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 56,500,000 դրամ արժողությամբ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 015.08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 30-ը բնական գազի մատակարարում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հունիսի 1-ին կնքված N 07-0125-22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 30-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 30-ը ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ____________ կողմից
«05» դեկտեմբերի 2014թ

## Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2015-2016 թ. իրականացվող Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ)

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներ, ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության տակ գործող, ՀՀ Կառավարությանն առընթեր և այլ գերատեչչական պատկանելիություն ունեցող գիտական և կրթական հիմնարկներ:<br>Բնագավառը՝ գիտություն և կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 56 500 000դրամ:<br>Այդ թվում դրամաշնորհների գումարը 50 200 000 դրամ:<br>Կազմակեպական ծախսեր 6 300 000 դրամ:<br><br>Մեկ դրամաշնորհի գումարը կազմում է 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>Միջոցները ստացվելու են ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ գիտական և կրթական հիմնարկներ, գիտնականներ:<br>Ընդամենը 25 գիտական խմբեր, Ընդհանուրը՝ 100 գիտնականներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2015 – 30.01.2016 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից ՀՀ թերթերում տպագրված հայտարարության հիման վրա մրցույթի կազմակերպում: Մրցույթի հայտարարումից հետո մասնակիցները էլ. փոստով, անգլերեն լեզվով գրված իրենց աշխատանքները ուղարկում են Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի անցկացման կազմ. կոմիտեին(Հետազոտական խորհրդին), որը համապատասխան |



| | | |
|---|---|---|
| | | մասնագիտությունների առաջատար գիտնականներին է ներկայացնում առաջադրված աշխատանքները: Համադրելով տարբեր գիտնականների եզրակացությունները գիտական խմբերի աշխատանքների վերաբերյալ՝ հայտարարվում են մրցույթի հաղթողները: Դրամաշնորհի հաղթողները ճանաչվելուց հետո ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղը պայմանագրեր է կնքում նրանց հետ և վերահսկում պայմանների կատարումը:Գիտական ծրագրերի իրականացման ժամանակ՝ ՀՕՖ-ի մոնիթորինգի հանձնաժողովը տարին 2 անգամ այցեր է կատարում գիտական խմբեր ընթացքին ծանոթանալու նպատակով:<br>Ծրագրի 1-ին փուլ.01.01.2015թ. – 01.07.2015թ.<br>Ծրագրի 2-րդ փուլ. 01.07.2015թ. – 30.01.2016թ.<br><br>Դրամաշնորհի առաջին կեսը տրվում է հունվար 2015թ. գումարի երկրորդ կեսը՝ առաջին փուլի ավարտին /հուլիս, 2015թ. / :<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 56 500 000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք օգտագործված գազի դիմաց 01.01.2015 - 31.12.2015թ թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 3 000 000 դրամի չափով՝<br>պայմանագիր N 015 08.13.1511, կնքված 07.07.2013 թ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի (Երևանի ԳԳՄ, ՀՀ, ք, Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ 00046317), պետական գրանցման վկայականի ներդիր 020-ով վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք օգտագործված ջրի դիմաց 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 700 000 դրամի չափով՝<br>պայմանագիր N 07-0125-22, կնքված 01.06.06 «Երևան Ջուր» ՓԲԸ-ի (Երևան 0025, Աբովյան 66ա, ՀՎՀՀ01555351) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների համար 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 500 000 դրամի չափով՝<br>պայմանագիր N 010957156 կնքված 28.11.06թ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի (ք. Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ 02500052) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է այդ թվում 6 300 000 ՀՀ դրամ, ընդհանուր արժողության 11.15 %: Ծրագրի սպասարկումը ներառում է<br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 1 600 000<br>ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 500 000<br>կոմունալ ծախսեր 3 700 000 |

| | | |
|---|---|---|
| | | տպագրական ծախսեր 500 000 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ ԳԱԱ, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման և վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, իսկ եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1252 -Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՐԹԱՎՃԱՐՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/22280-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21931-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9589-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N ՖԲ/ԱնՄ-4/9820-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 03/07-1/14822-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 114,134,000 դրամ արժողությամբ «Կրթավճարներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 177/01/11/2012 պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 3,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 18-ին կնքված N 230174 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՓրայսուոթերհաուսԿուպերս Սենտրալ Այժա ընդ Կոկասիս Բի.Վի.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02586628) 2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 50100214 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 5,244,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ____________ կողմից
«05» դեկտեմբերի 2014 թ

## Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2015 թ.իրականացվող Կրթավճարների
## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել հանրապետության պետական և մասնավոր բարձրագույն հաստատություններում, քոլեջներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությունների գծով ուսուցանվող, սոցիալապես անապահով և անվճարունակ ուսանողներին՝ կրթավճար և կրթաթոշակ տրամադրելու միջոցով: Վերը նշված կրթական հաստատությունների ցանկը տրվում է սույն ծրագրին կից ցուցակում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Անուշ Մաթևոսյան, Ժիրայր Նիշանյան, Հարոլդ Գուլամիրյան, Մարգարիտ Անեմյան, Էդուարդ Մարդիգյան, Ավեդիս և Արշո Բաղսարյան, Թոմաս և Դորա Գարաբեդյան, Անդրանիկ և Բեթթի Բերբերյան, Հարրի և Սյուզան Թուֆայան |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և ք. Երևան:<br>Բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 114 134 000 ՀՀ դրամ:<br>Տարեկան ուսման վարձը կազմում է 70 250 000 ՀՀ դրամ:<br>Տարեկան կրթաթոշակը 28 540 000 ՀՀ դրամ:<br>Կազմակերպական ծախսեր 15 344 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 1. Երևանի առաջնակարգ ԲՈՒՀ-երի բակալավրիատում, մագիստրատուրայում և կլինիկական օրդինատուրայում սովորող 136 ուսանողներ:<br>2. Ծագումով Գեղարքունիքի մարզից 83 ուսանող, որ սովորում են Գավառի պետական համալսարանում և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում: |



| | | |
|---|---|---|
| | | 3. ք. Երևանի, ք. Վանաձորի և ք. Գավառի մանկատների կողմից երաշխավորված, ուսումը շարունակելու ցանկություն հայտնած մանկատների 80 ներկա և նախկին սաներ:<br>4. Տավուշի մարզի բարձրագույն, արհեստագործական, միջնակարգ մասնագիտական կրթություն ստացող թվով 40 ուսանողներ:<br>Ընդհանուրը՝339 ուսանողներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2015 – 31.12.2015 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթավճարների տրամադրման մրցույթների մասին հայտարարությունների տարածում ԶԼՄ-ների միջոցով /թերթեր, ռադիո, հեռուստակայաններ/: (մայիս - հունիս 2015)<br>2. Մրցույթների մասին հայտարարությունների տարածում վերոնշյալ բուհերում՝ հայտարարությունները փակցնելու միջոցով: (ընդունող հանձնաժողովների 2015 թ. աշխատանքի մեկնարկին)<br>3. Փաստաթղթային փաթեթների անհրաժեշտ քանակի պատճենահանում, տարածում բուհերում, այլ կրթօջախներում: (մայիս-հուլիս 2015)<br>4. Դիմորդների կողմից լրացված փաթեթների հավաքում: (օգոստոս 2015)<br>5. Փաթեթների դիտարկում, նախնական ընտրություն: (օգոստոս 2015)<br>6. Բոլոր դիմորդների տնայցեր: (օգոստոս 2015)<br>7. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում մանկատներում: ՀՕՖ-ի կրթական ծրագրերի համակարգող խորհրդի նիստի աշխատանքների կազմակերպում՝ վերջնական ընտրություն կատարելու նպատակով: օգոստոս-սեպտեմբեր 2015<br>8. Հաղթողների ընտրություն: սեպտեմբեր 2015<br>9. Մրցույթների արդյունքների մասին տեղեկացում – հաղթողների ցուցակները փակցվում են ՀՕՖ-ում:(սեպտեմբեր 2015)<br>10. Կողմնորոշման հանդիպումներ մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողների հետ, պայմանագրերի ստորագրում:(ուս տարվա ընթացքում)<br>11. Կրթավճարների փոխանցում համապատասխան բուհեր /տարեկան երկու անգամ/: (յուրաքանչյուր կիսամյակի սկզբին) Տարեկան ուսման վարձը կազմում է 70 250 000 ՀՀ դրամ:<br>12. Ամենամսյա կրթաթոշակների վճարում ուսանողներին: (յուրաքանչյուր ամիս) Տարեկան կրթաթոշակը 28 540 000 ՀՀ դրամ:<br>13. Բուհերի հետ մշտական կապի պահպանում՝ ուսանողների ակադեմիական առաջադիմությանը հետևելու նպատակով: (ուս. տարվա ողջ ընթացքում)<br>14. Ամեն կիսամյակի ավարտից հետո ստուգման գրքույկների պատճենների հավաքում և դիտարկում: (յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո) |

| | | |
|---|---|---|
| | | 15. Առաջադիմության արդյունքները ուսումնասիրելու նպատակով Կրթական ծրագրեի համակարգող խորհրդի նիստերի գումարում:(յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո)<br>16. Ուսանողների մասնակցությամբ բարեգործական միջոցառումնների կազմակերպում: (ուս տարվա ընթացքում)<br>17. Ծրագրի բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ այլ միջոցառումների կազմակերպում կամ քայլերի ձեռնարկում: (ուս տարվա ընթացքում)<br>Կրթավճարները տրամադրվում են մրցութային կարգով՝մասնակցության և ընտրության երկու հիմնական չափանիշների հիման վրա՝ դիմորդի ընտանիքի աղքատության ցուցանիշը և դիմորդի ակադեմիական առաջընթացը: Կրթավճարները տրամադրվում են բակալավրիատում կամ այլ կրթական հաստատությունում ուսումնառության ողջ ընթացքում: Ծրագրին մասնակցությունը կասեցվում է, եթե տարիների ընթացքում փոփոխվել է ընտանիքի սոցիալական վիճակը կամ ուսանողը թերանում է ուսման մեջ և չի կատարում իր պարտավորությունները: Նման դեպքերում ոչ բավարար առաջադիմություն ունեցող ուսանողի փոխարեն ընտրվում է նորը՝ ելնելով վերոնշյալ չափանիշներից: Յուրաքանչյուր ամիս 7000-ական դրամ կրթաթոշակ է տրամադրվում ծրագրերում ընդգրկված մանկատան սան կամ շրջանավարտ ուսանողներին, Գավառի պետական համալսարանում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում սովորող ուսանողներին՝ բարերարների ցանկությամբ: Գումարը նախատեսված է ուսումնական նյութերի պարճենահանման, գրենական պիտույքների և դասագրքերի ձեռքբերման կամ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:<br><br>Դիմորդների և ուսանողների ընտանիքների սոցիալական վիճակի մասին տեղեկությունները հավաքագրվում են համապատասխան հարցաթերթիկի միջոցով և այնուհետև ճշտվում նրանցից յուրաքնաչյուր բնակարան այցելության ընթացքում: Մրցույթի արդյունքները ամփոփվում են կրթական ծրագրերի հանձնաժողովի նիստերի ընթացքում: Հանձնաժողովի անդամներ են ՀՕՖ աշխատակիցները, ծրագրերի համակարգողները,բարերարների ներկայացուցիչները և ՀՕՖ կրթական ծրագրերի շահառուները՝կրթաթոշակառուները:<br><br>Կազմակերպական ծախսեր 15 344 000 ՀՀ դրամ<br>Տարեկան ուսման վարձը կազմում է 70 250 000 ՀՀ դրամ:<br>Տարեկան կրթաթոշակը 28 540 000 ՀՀ դրամ:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքն է 114 134 000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար |

4

| | | |
|---|---|---|
| | | 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 3 700 000 դրամի չափով՝ պայմանագիր 177/01/11/2012 կնքված 01.11.2012թ. «Յուքոմ» ՍՊԸ-ի, (ք. Երևան, Տերյան 19, բն. 4, ՀՎՀՀ 0024873) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք օգտագործված էլեկտրաէներգիայի դիմաց 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 000 000 դրամի չափով՝ պայմանագիր 230174, կնքված 18.03.08թ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» Փ.Բ.Ը.Հարավ մասնաճյուղի (ք. Երևան, Արշակունյաց 17ա, ՀՎՀՀ 01520882) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք հաշվապահական ծառայությունների համար 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 5 244 000 դրամի չափով՝ հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման նամակ-համաձայնագիր N 50100214, կնքված 25.11.2014թ. «ՓրայսուոթերհաուսԿուպերս Սենթրալ Այժա ընդ Կոկասիս Բի. Վի» ընկերության հայաստանյան մասնաճյուղի (ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1 թիվ 17/1, ՀՎՀՀ 02586628) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 15 344 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 13.44 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝<br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 3 000 000<br>կապի ծառայություններ 3 700 000<br>կոմունալ ծախսեր 2 000 000<br>տրանսպորտային ծախսեր 1 000 000<br>հաշվապահական ծառայություններ 5 244 000<br>տպագրական ծախսեր 400 000 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի<br>2. ՀՀ Կրթության և գիտության , ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների,<br>3. Բոլոր վերը նշված կրթօջախների<br>4. Մանկատների<br>5. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի<br>6. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի<br>7. Տեղական ինքնակառավարման մարմինների<br>8. Վերոնշյալ ոլորտում գործող այլ տեղական և արտասահմանյան ոչ |

| | | |
|---|---|---|
| | | կառավարական կառույցների |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ծրագրի հովանավորների՝ Անուշ Մաթևոսյանի, Ժիրայր Նիշանյանի, Մարգարիտ Աճեմյանի, Էդուարդ Մարդիգյանի, Գուլամերյան ընտանիքի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1253 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/22286-14 և դեկտեմբերի 3-ի N 06/3-3/22107-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9580-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N ՖԲ/ԱնՄ-4/9821-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 117,946,000 դրամ արժողությամբ «Բարեգործական ճաշարաններ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեդտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01502333) 2008 թվականի նոյեմբերի 26-ին կնքված պայմանագրում (2014 թվականի հունվարի 1-ին կնքված N 5 համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վարձակալության ծառայությունների մատուցում՝ 3,660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շարա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05505594) 2012 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված պայմանագրում (2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդի և հիգիենիկ պարագաների մատակարարում՝ 17,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 2939 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ________ կողմից
«05» դեկտեմբերի 2014թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2015 թ. իրականացվող- *Բարեգործական ճաշարաններ*

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Բարեգործական ճաշարաններ» ծրագրի նպատակն է նպաստել սոցիալական լարվածության մեղմացմանը մայրաքաղաքում և հանրապետության այլ քաղաքներում՝ Գյումրի, Բերդ, Բյուրեղավան, Նոր Հաճըն, սոցիալապես անապահով խավերին /միայնակ տարեցներ, հաշմանդամներ, գործազուրկներ/ ամենօրյա կալորեական տաք կերակուրով ապահովելու միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ամերիկայի ՀՕՖ-ի կողմից իրականացվող «Բարեգործական ճաշարաններ» բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող սննդամթերքի, լվացքի և հիգիենիկ պարագաների գնում, կապ, կոմունալ կենցաղային, տարածքի և պահեստի վարձակալության համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 01.01.2015 թվականից մինչև 31.12.2015 թվականը: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ - Հայ օգնության ֆոնդ, ԱՄՆ-ի Սան-Ֆրանցիսկոյի «Հայաստանի բարեկամներ» կազմակերպություն, Նիշան Աթինիզյան |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ամերիկայի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ք. Երևան, ք. Բերդ, ք. Գյումրի, ք. Նոր Հաճըն, ք. Բյուրեղավան:<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 117 946 000.00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ք. Երևանի Նոր Նորք համայնքի բարեգործական ճաշարան՝ 180 շահառու, ք. Բերդի բարեգործական ճաշարան՝ 120 շահառու, ք. Գյումրիի բարեգործական ճաշարան՝ 200 շահառու, ք. Նոր Հաճընի բարեգործական ճաշարան՝ 150 շահառու, ք. Բյուրեղավանի |



| | | |
|---|---|---|
| | | բարեգործական ճաշարան՝ 150 շահառու, բարեգործական ճաշարաններ այցելող 800 կարիքավորներ և ծերեր, որոնք ընտրվում են տեղական սոցիալական ծառայությությունների հետ համագործակցելով:<br><br>Գյումրի բարեգործական ճաշարանում բարեգործի ցանկությամբ տրվում է նաև հագուստ և հիգենիայի պարագաներ:<br>Ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է անվճար: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը (նկամ սկիզբը, ավարտը | 01.01.2015 – 31.12.2015 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տեղական սոցիալական ծառայությունների հետ համաձայնեցված ցուցակներով՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, շաբաթական 5 օր, օրական 1 անգամ տաք կերակուրի մատուցում կարիքավորներին և ծերերին: Ծրագիրը իրականացվելու է տեղական սոց. ծառայությունների հետ կազմված ցուցակներով |

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | 2 [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | 180 | | | | | |
| *սնունդ և հիգենիկ պարագաներ* | | *17 874 000.00* | *4 468 500.00* | *4 468 500.00* | *4 468 500.00* | *4 468 500.00* |
| *էլեկտրաէներգիա* | | *984 000.00* | *246 000.00* | *246 000.00* | *246 000.00* | *246 000.00* |
| *աշխատավարձ բ/ճ. անձնակազմի* | | *3 464 000.00* | *866 000.00* | *866 000.00* | *866 000.00* | *866 000.00* |
| Ընդամենը | | ***22 322 000.00*** | ***5 580 500.00*** | ***5 580 500.00*** | ***5 580 500.00*** | ***5 580 500.00*** |
| [illegible] | 120 | | | | | |
| *սնունդ և հիգենիկ պարագաներ* | | *11 876 000.00* | *2 969 000.00* | *2 969 000.00* | *2 969 000.00* | *2 969 000.00* |
| *էլեկտրաէներգիա* | | *550,000.00* | *137,500.00* | *137,500.00* | *137,500.00* | *137,500.00* |
| *աշխատա վարձ բ/ճ. անձնակազմի* | | *3 900 000.00* | *975 000.00* | *975 000.00* | *975 000.00* | *975 000.00* |
| Ընդամենը | | ***16 326 000.00*** | ***4 081 500.00*** | ***4 081 500.00*** | ***4 081 500.00*** | ***4 081 500.00*** |
| [illegible] | 200 | | | | | |
| *սնունդ և հիգենիկ պարագաներ* | | *17 500 000.00* | *4 375 000.00* | *4 375 000.00* | *4 375 000.00* | *4 375 000.00* |
| *Շահառուներին բաղնիքի սպասարկում* | | *2 400 000.00* | *600 000.00* | *600 000.00* | *600 000.00* | *600 000.00* |
| *էլեկտրաէներգիա, ջուր* | | *1,200,000.00* | *300,000.00* | *300,000.00* | *300,000.00* | *300,000.00* |
| *վարձավճար* | | *2,160,000.00* | *540,000.00* | *540,000.00* | *540,000.00* | *540,000.00* |
| *Աշխատավարձ* | | *4 860 000.00* | *1 215 000.00* | *1 215 000.00* | *1 215 000.00* | *1 215 000.00* |
| Ընդամենը | | ***28 120 000.00*** | ***7 030 000.00*** | ***7 030 000.00*** | ***7 030 000.00*** | ***7 030 000.00*** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պահեստի վարձակալություն | | 3,660,000.00 | 915,000.00 | 915,000.00 | 915,000.00 | 915,000.00 |
| [redacted] | | 31 780 000.00 | 7 945 000.00 | 7 945 000.00 | 7 945 000.00 | 7 945 000.00 |
| [redacted] | 150 | | | | | |
| սնունդ և հիգենիկ պարագաներ | | 11 760 000.00 | 2 940 000.00 | 2 940 000.00 | 2 940 000.00 | 2 940 000.00 |
| էլեկտրաէներգիա | | 920 000.00 | 230 000.00 | 230 000.00 | 230 000.00 | 230 000.00 |
| աշխատավարձ թ/ճ. անձնակազմի | | 2 624 000.00 | 656 000.00 | 656 000.00 | 656 000.00 | 656 000.00 |
| Ընդամենը | | 15 304 000.00 | 3 826 000.00 | 3 826 000.00 | 3 826 000.00 | 3 826 000.00 |
| [redacted] | 150 | | | | | |
| սնունդ և հիգգիենիկ պարագաներ | | 11 760 000.00 | 2 940 000.00 | 2 940 000.00 | 2 940 000.00 | 2 940 000.00 |
| էլեկտրաէներգիա | | 920 000.00 | 230 000.00 | 230 000.00 | 230 000.00 | 230 000.00 |
| աշխատավարձ | | 2 624 000.00 | 656 000.00 | 656 000.00 | 656 000.00 | 656 000.00 |
| Ընդամենը | | 15 304 000.00 | 3 826 000.00 | 3 826 000.00 | 3 826 000.00 | 3 826 000.00 |
| [redacted] | 800 | 101 036 000.00 | 25 259 000.00 | 25 259 000.00 | 25 259 000.00 | 25 259 000.00 |
| [redacted] | | | | | | |
| աշխատավարձ | | 13 690 000.00 | 3 422 500.00 | 3 422 500.00 | 3 422 500.00 | 3 422 500.00 |
| տրանսպորտ | | 800 000.00 | 200 000.00 | 200 000.00 | 200 000.00 | 200 000.00 |
| գրասենյակային ծախսեր | | 420 000.00 | 105 000.00 | 105 000.00 | 105 000.00 | 105 000.00 |
| Կապ և հեռահաղորդակցություն | | 2 000 000.00 | 500 000.00 | 500 000.00 | 500 000.00 | 500 000.00 |
| Ընդամենը | | 16 910 000.00 | 4 227 500.00 | 4 227 500.00 | 4 227 500.00 | 4 227 500.00 |
| [redacted] | | 117 946 000.00 | 29 486 500.00 | 29 486 500.00 | 29 486 500.00 | 29 486 500.00 |

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 117 946 000.00 ՀՀ դրամ:
Շահառուների ընդհանուր թիվը՝ 800 մարդ

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ակնկալում ենք պահեստի վարձակալության համար 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 3 660 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 26.11.2008թ «Մեդտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ի (ՀՀ, ք, Երևան, Մ. Հերացու 7, ՀՎՀՀ 01502333) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք շահառուների համար ձեռք բերվող սննդի և հիգենիկ պարագաների համար 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 17 500 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 06.12.2012թ «Շարա» ՍՊԸ-ի (ՀՀ, ք, Գյումրի, 26 Կոմիսարների 133, ՀՎՀՀ 05505594) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. |



| | | |
|---|---|---|
| | | Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք բջջային հեռախոսակապի ծառայությունների համար 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 000 000 դրամի չափով՝ պայմանագիր N 2939 կնքված 28.11.06թ «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ի (ք. Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ 02500052) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 16,910,000.00 ՀՀ դրամ, որն ընդհանուր ծրագրի 14.34 % է: Ծրագրի սպասարկումը ներառում է ճաշարանների աշխատանքների վերահսկողություն ՀՕՖ-ի աշխատակիցների կողմից, տրանսպորտային ծախսեր, հանդիպումներ տեղ. ինքնակառավարման մարմինների հետ, գրասենյակային ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Իրականացման ընթացքում կազմակերպությունն համագործակցում է՝ ՀՀ Աշխատանքի և սոցապ. նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից: Եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1254 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՐԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/22254-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21933-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9578-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N ՖԲ/ԱնՄ-4/9758-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 73,800,000 դրամ արժողությամբ «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2013 թվականի հունիսի 18-ին կնքված՝ N ID 1604 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2011 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 131/11 պայմանագրում նշված գործարքը (2014 թվականի նոյեմբերի 18-ի N 3 համաձայնագրի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Մարգսյանի __________ կողմից
«05» դեկտեմբերի 2014թ

# Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2015 թ. իրականացվող Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին օգնության
# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագիրը նպատակն է Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը: Ծրագրով նախատեսվում է նաև ամառային հանգստի կազմակերպում այդ երեխաների համար: Ներկայումս ծրագրում ընդգրկված են 940 երեխաներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Անընկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միություն, ամերիկահայ ընտանիքներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Ջավախք:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 73 800 000 ՀՀ դրամ: Որից՝<br>դրամական օգնություն 68 500 000 ՀՀ դրամ,<br>կազմակերպական ծախսեր 5 300 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի մարզերում և Ջավախքում բնակվող 940 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ՝ Սյունիքի մարզից 231 , Շիրակի մարզից 68 , Տավուշի մարզից 53, Արարատի մարզից 328, Արմավիրի մարզից 40, Արագածոտնի մարզից 45, Կոտայքի մարզից 80, Գեղարքունիքի մարզից 34, և Ջավախքից 61 երեխաներ: |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2015 – 31.12.2015 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դրամական օգնության տրամադրում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ մինչև 100 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ:<br>Ընդհանուր գումարը՝ 68 500 000 ՀՀ դրամ:<br>2. Հայ Առաքելական եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում:<br>Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա:<br>Կազմակերպական ծախսեր՝ 5 300 000 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքն է 73 800 000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անընկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 300 000 դրամի չափով՝ պայմանագիր N ID 1604 կնքված 18.06.2013թ «Արմենիան Դեյթարոմ Քամփնի» ՓԲԸ-ի (ք. Երևան 0012, Հրաչյա Քոչար 13/1, ՀՎՀՀ 00930093) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br>Անընկալում ենք ավտոմեքենայի վառելիքի ձեռք բերման համար 01.01.2015 - 31.12.2015 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 4 000 000 դրամի չափով՝ պայմանագիր 131/11, կնքված 14.11.11թ «Ֆլեշ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Կողբացու 30, ՀՎՀՀ 01808789) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 5 300 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 7.18 %-ը:<br>Ծրագրի սպասարկումը ներառում է<br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 1 000 000 ՀՀ դրամ<br>կապի ծառայություն 300 000 ՀՀ դրամ<br>տնայցերի հետ կապված ծախսեր 4 000 000 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի |

| | | |
|---|---|---|
| | | 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության,<br>3. Տեղական ինքնակառավարման մարմինների<br>4. Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Վիրահայոց թեմերի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1255 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/22445-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21930-14 , Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9588-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N ՖԲ/ԱնՄ-4/9849-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագիրը՝ 102,759,368 դրամ արժողությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Երևան, Կ. Ուլնեցու 64, ՀՎՀՀ՝ 01009295)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 6-ին կնքված N 222226 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 013.08.13.0948 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05001995) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Դավիթ 84» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00833046) 2014 թվականի նոյեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված հացամթերքի մատակարարում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Գրանդ Քենդի» հայ կանադական ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրվող քաղցրավենիքի և հրուշակեղենի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Տեխնոքեմ ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529519) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 50100215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 4,356,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433357) 2014 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 37 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ֆինանսական հաշվետվությունների՝ այդ թվում հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, սեփական կապիտալի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունների աուդիտորական ուսումնասիրություն՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Էյ- ի- Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2010 թվականի ապրիլի 9-ին N Ե-1118 պայմանագրին կից համաձայնագիր N 3/Ե-1118-ում, 10.04.2013 թվականի համաձայնագիր N 4/Ե-1118-ում, 10.11.2014 թվականի համաձայնագիր N 5/Ե-1118-ում 10.11.2014 թվականի դրությամբ նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գազապաշտպանման համակարգի տեխնիկական

սպասարկման ծառայությունների մատուցում՝ 170,370 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի։

12) Հայաստանի Հանրապետության ոստիկանության ՀԿԱ վարչության հետ (ՀՎՀՀ՝ 01533334) 2009 թվականի հունվարի 8-ին կնքված N 01/09 պայմանագրին կից համաձայնագրերում, 01.03.2010 թվականի և 06.11.2014 թվականի դրությամբ նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հայտնաբերել և «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ ներկայացնել մուրացկանությամբ, թափառաշրջիկությամբ զբաղվող և խնամքից զուրկ մնացած անչափահասներին՝ 7,978,368 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի։

13) «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01842346) 2011 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում (2013 թվականի հոկտեմբերի 11-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տրամադրել պահանջված քանակի սննդամթերքի և տնտեսական ապրանքների այն տեսականին, որն առկա է տվյալ պահին վաճառքի համար՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի։

14) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված N 023/27/112012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի։

15) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861057) 2013 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նշված ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի։

3. «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն։

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետին։

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն ............ Մ.Անտոնյան

26.նոյեմբերի, 2014թ.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թ. իրականացվելիք սոցիալական

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անմիջական նպատակը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, վարքային և հոգեհուզական խնդիրներով, երեխաների համար «ճգնաժամի միջամտության» ծառայությունների մատուցում երկու ճանապարհով՝<br>1) Ներկենտրոնային - Կենտրոնում այդ երեխաների ժամանակավոր ապաստանում, խնդիրների կարգավորում և վերադարձ ընտանիք և/կամ վերատեղավորում<br>2) Արտակենտրոնային - «Թեժ գիծ» ծառայության կամ ոստիկանության ու այլ մարմինների կողմից առնչված տեղեկատվության հիման վրա սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում դժվար իրավիճակում հայտնված երեխաներին՝ անմիջապես նրանց ընտանիքում՝ կոնկրետ համայնքում։ |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող մասնագիտական ծառայությունների մատուցման, սննդամթերքի, հագուստի, գրենական պիտույքների, սանիտարատեխնիկական պարագաների գնման, ընթացիկ վերանորոգման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալում ենք ԱՄՆ-ից ազատում։ |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորքի գրասենյակ։ |
| 4 | Ծրագրի կատարողը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ,<br>հասցեն՝ ք. Երևան, Կ.Ուլնեցու փողոց, թիվ 64, ՀՎՀՀ 01009295 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզեր<br>Բնագավառը՝ սոցիալական, հոգեբանական և սոցիալ-մանկավարժական աջակցություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 102 759 368 ՀՀ դրամ։ Միջոցները ստացվելու են ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից։ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ թափառաշրջիկ, աղքատ, անապահով, մուրացիկ, անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և |

14/1

| | | |
|---|---|---|
| | | աջակցության կարիք ունեն և Կենտրոն են ուղղորդվում ՀՀ Ոստիկանության անչափահասների բաժանմունքի (կնքված պայմանագրի համաձայն), ինչպես նաև Երեխաների պաշտպանության մարզային բաժիններ, համայնքային Խնամակալության հանձնաժողովների, կրթական հաստատությունների, պետական և հասարակական այլ տարբեր ատյանների կողմից (ստորագրված համաձայնագրերի համաձայն):<br>Շահառուների թիվը.<br>Ներկենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 250 երեխա և առնվազն 200 ծնող:<br>Արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 1500 երեխա և ավելի քան 1000 ծնող/խնամող:<br>Կենտրոնի ծրագրերում ընդգրկված երեխաները/ընտանիքները կստանան իրենց կարիքներին համապատասխան՝ ԵԱԿՀ-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները:<br>Ակնկալվում է, որ տարվա ընթացքում ծառայություններ կստանան մինչև 3000 շահառուներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը և/ կամ սկիզբը, ավարտը | 01.01.2015թ. - 31.12.2015թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Արագ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ Ապաստանման, Թեժ գիծ, Արտակենտրոնային, Խնամատարության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի ներքո և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են Կենտրոնում և ստանում 24-ժամյա խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավական ծառայություններ, իսկ ոչ այնքան վտանգավոր պայմաններում, սակայն դարձյալ բարձր ռիսկի ներքո գտնվողները Կենտրոնից աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում:<br>Աջակցությունը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմամասնագիտական գնահատում, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում:<br>Ծառայությունները մատուցվելու են երկու մոտեցմամբ՝ Ներկենտրոնային՝ 24-ժամյա ապաստանման և Արտակենտրոնային՝ անմիջապես երեխայի ընտանիքում:<br>Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաները ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (հիգիենա, սնունդ), սոցիալ հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացիոնար բուժ. հաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշման աջակցություն, թերապևտիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնարարքների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների մոտ: Այս ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, սակայն անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահատկություններից և երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի:<br>Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքը սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է, իր կարիքներին համապատասխան, բոլոր վերը հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կառույցներին և ծառայություններին, որոնք առնչվում են տվյալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի |

| | | |
|---|---|---|
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1270 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-175-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/21297-14 և նոյեմբերի 24-ի N 06/3-3/21059-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-175-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում և 2014 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 0180694 համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1,349,016 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1271 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-177-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/21307-14 և նոյեմբերի 26-ի N 06/3-3/21214-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում և 2014 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 0180694 համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 278,004 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2014 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N PD-232-11-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը փոստային կապի ծառայությունների վճարովի ծառայության մատուցում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1272 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-177-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 8-ի N 07/80-2/22435-14 և նոյեմբերի 4-ի N 06/3-3/22275-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00840437) 2014 թվականի նոյեմբերի 3-ին կնքված N 28 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ավտոմեքենաները պահեստամասերով և այլ օժանդակ նյութերով ապահովում՝ 2,158,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1273 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1241-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 07/80-2/21622-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21702-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1241-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անի Պլազա հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2014 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N 18112014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոնֆերանս սրահի տրամադրում և սննդի մատուցում՝ 157,595 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1274 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/22442-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21986-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-1059-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում և 9-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում «30.12.2014թ.» բառերը փոխարինել «31.12.2015թ.» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ոսկե Գրուպ» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02800538) հետ 2014 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 101114/Մ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամրանների մատակարարում՝ 13,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արքակ և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02228418) 2014 թվականի նոյեմբերի 24-ին կնքված N 12/ՀՀ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համաշինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 4,467,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արքակ և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02228418) 2014 թվականի նոյեմբերի 24-ին կնքված N 13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտաքին ինժեներական ցանցերի և կաթսայատան նախագծման աշխատանքների իրականացում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մոսկովյան ինվեստիցիոն շինարարական ընկերություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02573694) 2014 թվականի նոյեմբերի 24-ին կնքված N 14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համաշինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 2,360,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1275 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 07/80-2/21567-14 և նոյեմբերի 28-ի N 06/3-3/21519-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում ավելացնել «Լոռու մարզի Թումանյան, Դսեղ համայնքների բնակիչները» բառերը:

2. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն պայմանագրի 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի նոյեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի միջնակարգ դպրոցի ստեղծագործարանի վերանորոգում՝ 2,128,753 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1276 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ԱԴՎԵՆՏԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 07/80-2/21502-14 և նոյեմբերի 28-ի N 06/3-3/21521-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 22-ի «Ադվենտիստական զարգացման և օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Խողովակների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի երկու համայնքների» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշման (2014 թվականի նոյեմբերի 14-ի N 1165-Ա որոշման խմբագրությամբ) և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «11 միլիոն դրամ» բառերը փոխարինել «8,283,422 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3820 գծամետր պոլիէթիլենային խողովակների, 40 անցումի, 1 խցանի և 21 փականի ձեռքբերում՝ 8,283,422 դրամի չափով»:

2. Սահմանել, որ «Ադվենտիստական զարգացման և օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՐՄ ՊԼԱՍՏ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02572315) 2014 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պոլիէթիլենային խողովակների և այլ ապրանքների ձեռքբերում՝ 266,502 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1277 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1067-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 07/80-2/21588-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21705-14 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 14-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի շինվերանորոգում» ծրագրի մասին» N Մ-628-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին և 2-րդ կետի երկրորդ պարբերությունում «49,938.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «54,993.67 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ______ կողմից
«21» նոյեմբերի, 2014թ

**Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Չինչին գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շին-վերանորոգում»**

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորոգել ՀՀ Տավուշի մարզի Չինչին գյուղի մանկապարտեզի շենքը, որը հարմարավետ պայմաններ կստեղծի մանկապարտեզի 25 սաների կրթությունն ու առօրյան կազմակերպելու համար |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում |
| 3. | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Մ. Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, գյուղ Չինչին, 8-րդ փողոց, փակուղի 2/3<br>Բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 54 993.67 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Տավուշի մարզի Չինչին գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | սկիզբ՝ 2014թ.հոկտեմբերի 14<br>ավարտ՝ 2015 թ. մարտի 31 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է Չինչին գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում, որն հարմարավետ պայմաններ կստեղծի մանկապարտեզի սաների կրթությունն ու առօրյան բարենպաստ կազմակերպելու համար:<br><br>Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2014թ հոկտեմբերի 14-ից մինչև 2015թ |

| | | |
|---|---|---|
| | | մարտի 31-ը:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 54 993.67 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Իրականացվելիք շինարարական աշխատանքների մանրամասն ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կից հավելվածում: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 54 993.67 (Հիսունչորս հազար ինը հարյուր իննսուներեք ԱՄՆ դոլար և վաթսունյոթ ցենտ) համարժեք ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 14.10.2014թ. «Կանակա» ԲԲԸ -ի (ՀՀ, ք. Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ 06901369) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br>համաձայնագիր (պայմանագրի հավելված 2) կնքված 18.11.2014թ «Կանակա» ԲԲԸ -ի (ՀՀ, ք. Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ 06901369) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, ՀՀ Տավուշի մարզպետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1278 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-980-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/22118-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21988-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ)» N Մ-980-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «7,657,900 դրամի չափով» բառերը փոխարինել «9,270,400 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1279 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/22117-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21987-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա, 2012 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-919-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 9-րդ կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

Մտավոր, ֆիզիկական լսողական կամ զարգացման այլ խնդիրներ ունեցող երեխաների անվճար վերականգնողական բուժօգնության կազմակերպում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում – 739,000,000 դրամ:

Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ամբուլատոր վերականգնողական ծառայությունների մատչելիության և նրանց զարգացման խնդիրների վաղ միջամտման նպատակով Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 92 նախադպրոցական ուսումնական հաստատության վերականգնողական սարքավորումներով ու կահույքով հագեցում – 3,000,000 դրամ, նոյեմբեր-դեկտեմբեր 2014 թ:

2) ծրագրի 10-րդ կետի 2-րդ պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ամբուլատոր վերականգնողական ծառայությունների մատչելիության և նրանց զարգացման խնդիրների վաղ միջամտման նպատակով Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 92 նախադպրոցական ուսումնական հաստատության վերականգնողական սարքավորումներով ու կահույքով հագեցում – 3 մլն դրամ

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1280 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի տնօրենի 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 215-14 ԱՔ/ՆՎ գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-172-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի)» N Մ-1170-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «2014 թվականի հունվարի» բառերը փոխարինել «2015 թվականի հունվարի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1281 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի տնօրենի 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 215-14 ԱՔ/ՆՎ գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-175-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի)» N Մ-1173-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի 1-ին ենթակետում «2013 թվականի» բառերը փոխարինել «2003 թվականի» բառերով.

2) 1-ին կետի 6-րդ ենթակետում «N 081/13» բառերը փոխարինել «N 082/13» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1282 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1174-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի տնօրենի 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 215-14 ԱՔ/ՆՎ գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-174-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի)» N Մ-1174-Ա որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում «N 081/13» բառերը փոխարինել «N 083/13» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1283 -Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԵՎ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/22514-14 և 2014 թվականի դեկտեմբերի 9-ի N 06/3-3/22651-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 02/9657-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N ԱՄ/22.2/12922-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 9-ի N 03/07-1/15057-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 5-ի ՖԲ/ԱնՄ-4/9901-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մամիկոնյանց 30, ՀՎՀՀ՝ 00009237) իրականացվող՝ 4 մլրդ 10 մլն դրամ արժողությամբ «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագիրը (կցվում է):

2. «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՐԱԲԿԻՐ Միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ ի

Տնօրեն՝ Ս. Ղազարյանի կողմից

«1» դեկտեմբեր 2014.թ.

# Վ ե ր ա կ ա ն գ ն ո ղ ա կ ա ն բ ժ շ կ ո ւ թ յ ա ն զ ա ր գ ա ց մ ա ն և բ ժ շ կ ա ս ո ց ի ա լ ա կ ա ն խ ն դ ի ր ն ե ր ի բ ա ր ե լ ա վ մ ա ն ա ջ ա կ ց ո ւ թ յ ա ն

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակները | - Բնածին և ձեռքբերովի հիվանդություններ, զարգացման խանգարումներ, ինչպես և մտավոր, ֆիզիկական, լսողական խնդիրներ ունեցող հաշմանդամ երեխաների համար անվճար համալիր վերականգնողական բուժօգնության կազմակերպում Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում:<br>ՀՀ Առողջապահության նախարարության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Հայ Օգնության Միության կողմից համատեղ կատարված ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում մանկական ազգաբնակչության 0-8 տարեկան հասակային խմբում բնածին և ձեռք բերովի զարգացման խանգարումները կազմում են մինչև 10,5 տոկոս, որից նվազագույն հաշվարկներով 30.000 երեխա կարիք ունի համալիր վերականգնողական բուժման: Նախորդ տարիների ընթացքում Երևան քաղաքում և ՀՀ մարզերում , հիմնադրամի կողմից ստեղծված է թվով 8 վերականգնողական կենտրոն, որտեղ յուրաքանչյուր տարի համալիր բուժում են ստանում մինչև 1720 երեխա, կատարելով 44.500 այցելություն: Ծրագրի իրականացմամբ ակնկալում ենք կրկնապատկել բուժվող երեխաների թիվը՝ նպաստելով երեխաների այս խմբի ինտեգրմանը հասարակության մեջ<br>ՀՀ-ում քրոնիկական երիկամային անբավարարությամբ տառապող թվով 600 հիվանդներ գտնվում են ծրագրային հեմոդիալիզի վրա: Հիվանդների այս խումբը տարիներ շարունակ զրկված է ամառային հանգստի կազմակերպման հնարավորությունից, քանի որ Հայաստանում չկա նրանց համար ստեղծված շարունակական բուժման առողջարանային համալիր, որտեղ հանգստի հետ միասին հնարավոր լինի հեմոդիալիզի սեանսների իրականացումը:<br>Հիվանդանոցային և ամբուլատոր պայմաններում բուժվող հիվանդների բժշկական սպասարկման |

2

| | | |
|---|---|---|
| | | պայմանների բարելավում<br>- Բուժական, ախտորոշիչ և վերականգնողական ծառայությունների բարելավմանն ուղղված ծրագրերի ներդրում Արաբկիր Բժշկական համալիրում և մարզային վերականգնողական մասնաճյուղերում<br>- Արաբկիր Բժշկական համալիրում և մարզային վերականգնողական կենտրոններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ժամանակակից, բարձրորակ բժշկական սպասարկման ապահովում:<br>- Սույն նպատակների իրականացման համար ՀՀ մարզերում 3 նոր վերականգնողական կենտրոնների ստեղծում, նախկինում ստեղծած կենտրոնների հզորացում: Զարգացման խանգարումներով, ինչպես և քրոնիկ երիկամային անբավարարություն ունեցող, ծրագրային հեմոդիալիզի վրա գտնվող հիվանդների շարունակական բուժման և ամառային հանգստի առողջարանային կենտրոնի ստեղծում, ինչպես նաև Ապարանի Ջրամբար համայնքի Ամառային առողջարանային կենտրոնի հզորության ավելացում<br>- Զարգացման խանգարումների վաղ հայտնաբերման և վաղ միջամտման նպատակով Երևան քաղաքի վարչական շրջաններում բժշկա-սոցիալ-կրթական կենտրոնների ստեղծում գոյություն ունեցող հանրային կառույցներում (պոլիկլինիկա, մանկապարտեզ, դպրոց) դրա հետ կապված վերանորոգման վերակառուցման և կահավորման աշխատանքների իրականացում, անհրաժեշտ մասնագետների կրթում և կատարելագործում<br><br>- Վերանորոգման աշխատանքների իրականացում, անհրաժեշտ կահույքի ձեռք բերում և հատկացում Արաբկիր Բժշկական համալիրում, Երևան քաղաքում և մարզերում ստեղծված վերականգնողական կենտրոններում:<br><br>- Բարեգործական բեռների (բժշկական պարագաներ, սարքավորումներ, դեղորայք, ախտորոշիչ, ախտահանիչ և վիրակապական նյութեր, հիվանդանոցային սպիտակեղեն, արտահագուստ,հիվանդանոցային կահույք, մահճակալներ, հիվանդանոցային վերելակներ, շտապ օգնության մեքենաներ ) ներմուծում և անհատույց հատկացում Արաբկիր Բժշկական համալիրին և նրա վերականգնողական մասնաճյուղերին, ինչպես և հանրապետության այլ առողջապահական հաստատություններին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման | Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |

| | | |
|---|---|---|
| | նպատակը | |
| 3. | Բարեգործները | ՍԵՄՌԱՊլյուս հիմնադրամ (Շվեյցարիա), ՆԱՖ Ասոցիացիա (Բելգիա), «Օգնենք Հայաստանին հիմնադրամ» Շվեյցարիա/Շաֆհաուզեն, ԿԱՁԱ Շվեյցարիական մարդասիրական հիմնադրամ (Շվեյցարիա), Էլեոնորեն հիմնադրամ - Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոց (Շվեյցարիա), «Ստեֆան Էլմաս » հիմնադրամ (Շվեյցարիա), Հայկական Միացյալ Հիմնադրամ (ԱՄՆ), «Hope for the city» հասարակական բարեգործական կազմակերպություն (ԱՄՆ), «AmeriCares» հասարակական բարեգործական կազմակերպություն (ԱՄՆ), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), Օրանժ հիմնադրամ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (UNFPA), «Առաքելություն արևելք» կազմակերպության հայաստանյան գրասենյակ, Ջինիշյան հիշատակի հիմնադրամ, «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական հիմնադրամ, Քրոնիմետ բարեգործական հիմնադրամ, Գերմանիայի հայ բժիշկների միություն, այլ կազմակերպություններ և անհատներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Արաբկիր» Միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ<br>Ք. Երևան, Մամիկոնյանց 30, ՀՎՀՀ՝ 00009237 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երևան և ՀՀ մարզեր , բնագավառը՝ առողջապահություն, կրթություն, սոցիալական ապահովություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 4 մլրդ 290 մլն 700 հազ. դրամ (ներառյալ կազմակերպական ծախսերի համար նախատեսված գումարը) |
| 7. | Բարեգործություն ստացողները | Բնածին և ձեռքբերովի հիվանդություններով տառապող երեխաներ և դեռահասներ, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ, զարգացման խնդիրներ ունեցող մանկուց հաշմանդամ երեխաներ, երկարատև, շարունակական բուժում պահանջող հիվանդություններով տառապող երիտասարդներ և դեռահասներ , քրոնիկ երկամային անբավարարությամբ տառապող ծրագրային հեմոդիալիզի վրա գտնվող հիվանդներ: Հիմնադրամի կողմից Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ստեղծված 8 վերականգնողական կենտրոններում և Երևան քաղաքի թիվ 9 մանկական պոլիկլինիկայի վերականգնողական ծառայությունում անվճար բուժօգնություն ստացող տարեկան 1720 հատուկ կարիքներով երեխաներ: Բացի դրանից յուրաքանչյուր տարի քրոնիկ հիվանդություններ և զարգացման խնդիրներ ունեցող 120 երեխա անվճար առողջարանային բուժում է ստանում և հանգստանում Ապարանի Ջրամբար համայնքի ամառային առողջարանային կենտրոնում |
| 8. | Ծրագրի իրականացման | 1 հունվար 2015 – 31 դեկտեմբեր 2019 թ |



| | | |
|---|---|---|
| | տևողությունը | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | - Մտավոր, ֆիզիկական, լսողական կամ զարգացման այլ խնդիրներ ունեցող երեխաների համար մարզային վերականգնողական երեք նոր կենտրոնի ստեղծում<br>- *Կոտայքի մարզ, ք. Հրազդան*<br>*2015 փետրվար - 2016 փետրվար , 80 մլն դրամ*<br><br>- *Սյունիքի մարզ, ք. Գորիս*<br>*2017 հունվար - 2018 մայիս, 80 մլն դրամ*<br><br>- *Լոռու մարզ, ք. Ալավերդի*<br>*2018 հունվար - 2019 մայիս, 100 մլն դրամ*<br><br>- Երևան քաղաքում համայնքային մակարդակում բժշկա-սոցիալ-կրթական կենտրոնների ստեղծում, եղած հանրային կառույցներում (պոլիկլինիկա, մանկապարտեզ, դպրոց) վերակառուցման և կահավորման աշխատանքների իրականացում, մասնագետների կրթում (2012թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում մեկնարկեց նման պիլոտային ծրագիր, որն ընդգրկում է թիվ 9 մանկական պոլիկլինիկան, թիվ 92 նախադպրոցական ուսումնական հաստատությունը և Սիամանթոյի անվան թիվ 162 դպրոցը )<br>*2015 մայիս – 2019 դեկտեմբեր*<br>*200 մլն դրամ*<br>- Զարգացման խանգարումներ, տարբեր քրոնիկ հիվանդություններ ունեցող երեխաների, դեռահասների, մեծահասակների ինչպես և ծրագրային հեմոդիալիզի վրա գտնվող հիվանդների համար շարունակական բուժման և ամառային հանգստի առողջարանային կենտրոնի կառուցում Գեղարքունի քի մարզում, Սևանի ափին տարեկան 120 հիվանդի համար<br>*2015 մայիս – 2017 հոկտեմբեր ,*<br>*700 մլն դրամ*<br>- Զարգացման խանգարումներ, ֆիզիկական, մտավոր, խնդիրներ ունեցող, քրոնիկ հիվանդություններով տառապող երեխաների համար հիմնադրամի կողմից սետղծված Ապարանի Ջրամբար համայնքում գտնվող ամառային առողջարանային կենտրոնի հզորության ավելացման նպատակով նոր երկու մասնաշենքի կառուցում<br>*2015 հունվար – 2017 հոկտեմբեր*<br>*600 մլն դրամ* |

| | | |
|---|---|---|
| | | - Այս ամառային առողջարանային կենտրոնի գոյություն ունեցող մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների իրականացում<br>*2015 մայիս – 2018 հոկտեմբեր*<br>*130 մլն դրամ*<br>- Անհրաժեշտ կահույքի ձեռք բերում նոր կառուցվող վերականգնողական ինչպես և շարունակական բուժման և հանգստի առողջարանային կենտրոնների համար<br>*2015 հունվար – 2019 դեկտեմբեր*<br>*80 մլն դրամ*<br>- Հիմնադրամի միջոցներով զարգացման խնդիրներ ունեցող և քրոնիկ հիվանդություններով տառապող երեխաների շարունակական բուժօգնության և ամառային հանգստի անվճար կազմակերպում (տարեկան 120 երեխա), Ապարանի Ջրամբար համայնքի շարունակական բուժման և հանգստի առողջարանային կենտրոնում<br>*2015 հունիս – 2019 օգոստոս*<br>*140 մլն դրամ*<br>- Արաբկիր Բժշկական համալիր – Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի բաժանմունքներում և վերականգնողական կենտրոններում վերանորոգման աշխատանքների իրականացում<br>*2015 ապրիլ – 2019 դեկտեմբեր*<br>*150 մլն դրամ*<br>- Բարեգործական բեռների (բժշկական պարագաներ, սարքավորումներ, դեղորայք, ախտորոշիչ, ախտահանիչ և վիրակապական նյութեր, հիվանդանոցային սպիտակեղեն, արտահագուստ,հիվանդանոցային կահույք, մահճակալներ, հիվանդանոցային վերելակներ, շտապ օգնության մեքենաներ ) ներմուծում և անհատույց հատկացում Արաբկիր Բժշկական համալիրին և նրա վերականգնողական մասնաճյուղերին, ինչպես և հանրապետության այլ առողջապահական հաստատություններին<br>2015 հունվար – 2019 դեկտեմբեր<br>1 մլրդ 750 մլն դրամ<br>- Սոցիալապես անապահով ընտանիքների զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաներին անհրաժեշտ սարքերով և պարագաներով անվճար ապահովում (լսողական սարքեր, օրթեզներ, քայլակներ,հենակներ,հաշմանդամի սայլակներ և այլ):<br>*2015 հունվար – 2019 դեկտեմբեր*<br>*32 մլն դրամ (գումարը ներառված է ներկրվող բարեգործական բեռների ընդհանուր արժեքի մեջ )* |



| | | |
|---|---|---|
| | | - Կազմակերպական ծախսեր ՝ 280,700,000 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող ) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալ ները և նախատեսվող գինը | - Շինարարական և վերանորոգման աշխատանքներ – 2 մլրդ 40 մլն դրամ (Ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում )<br>- Անհրաժեշտ կահույքի ձեռք բերում նոր կառուցվող վերականգնողական, ինչպես և շարունակական բուժման և առողջարանային կենտրոնների համար – 80 մլն դրամ (Ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում )<br>- Հիմնադրամի միջոցներով զարգացման խնդիրներ ունեցող և քրոնիկ հիվանդություններով տառապող երեխաների շարունակական բուժօգնության և ամառային հանգստի անվճար կազմակերպում (տարեկան 120 երեխա), Ապարանի Ջրամբար համայնքի շարունակական բուժման և հանգստի առողջարանային կենտրոնում - 140 մլն դրամ<br>- Բարեգործական բեռների (բժշկական պարագաներ, սարքավորումներ, դեղորայք, ախտորոշիչ, ախտահանիչ և վիրակապական նյութեր, հիվանդանոցային սպիտակեղեն, արտահագուստ,հիվանդանոցային կահույք, մահճակալներ, հիվանդանոցային վերելակներ, շտապ օգնության մեքենաներ ) ներմուծում և անհատույց հատկացում Արաբկիր Բժշկական համալիրին և նրա վերականգնողական մասնաճյուղերին, ինչպես և հանրապետության այլ առողջապահական հաստատություններին - 1 մրդ 750 մլն դրամ (Ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում )<br>- Սոցիալապես անապահով ընտանիքների զարգացման տարբեր խնդիրներ և քրոնիկ հիվանդություններ ունեցող երեխաներին անհրաժեշտ սարքերով, պարագաներով և դեղորայքով անվճար ապահովում - 32 մլն դրամ (նախատեսվող 32 մլն դրամ գումարը ներառված է ներկրվող բարեգործական բեռների ընդհանուր արժեքի մեջ)<br>- Կազմակերպական ծախսեր ՝ 280,700,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նախատեսված բյուջեի 6,54 %-ի չափով (280,700,000 դրամ) գրասենյակային ծախսեր, աշխատողների աշխատավարձ, գործուղման ծախսեր, հաշվետվությունների հրապարակման և աուդիտի ծախսեր, ավտոմեքենայի շահագործման հետ կապված ծախսեր (վառելիք, քայուղեր և այլ)<br>2015թ – 54,000,000<br>2016 – 58,000,000<br>2017 – 58,000,000<br>2018 – 56,000,000<br>2019 – 54,700,000 |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցու-թյունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպություն ների հետ | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության, ՀՀ Կրթության և Գիտության նախարարության և Երևանի քաղաքապետարանի համագործակցությամբ |
| 13. | Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացքը վերահսկվում է հիմնադրամը ֆինանսավորող կազմակերպությունների կողմից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից |

«Արաբկիր» ՄՄԲՀ տնօրեն՝ Սպարտակ Ղազարյան

«ԱՐԱԲԿԻՐ»
«ARABKIR»
00009237

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1284-Ա**

**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 9-ի N 07/80-2/22610-14 և դեկտեմբերի 8-ի N 06/18-4/22430-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N ԱՄ/22.2/12901-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված վերականգնողական թերապիայի համար նախատեսված ութ հավաքածու հատուկ սարքերի (44 կգ ընդհանուր քաշով, 2,604.80 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 370.71 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը՝ երեք հավաքածու՝ «Արաբկիր» բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ին, երկու հավաքածու՝ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին և երեք հավաքածու՝ «Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ին:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1285 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/17664-14 և դեկտեմբերի 11-ի N 32F7-3920-18B4 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հասցեով ստացված TOYOTA LAND CRUISER PRADO 3.0.D մակնիշի ավտոմեքենան (2011 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ JTEBD9FJ6BK005188, 1750 կգ քաշով, 27,200 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ԱՄ ՄԶՄ ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1286 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/23085-14 և դեկտեմբերի 9-ի N 06/3-3/22657-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2014 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 10/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական-վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 49,310,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1287 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 9–ի N 07/80-2/22608-14 և դեկտեմբերի 11-ի N 06/5-1/22838-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8–ի N 03/07-1/15017-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8–ի N ԱՄ/22.2/13052-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Cambridge – Yerevan sister city association» ոչ առևտրային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի (7 տեղ, 130 կգ ընդհանուր քաշով, 27,130.30 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

# Ցանկ

<<Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> ՊՈԱԿ-ի անունով, <<Cambridge-Yerevan Sister Citi Association>> կողմից որպես հումանիտար օգնություն ստացված ապրանքները

| N | Ապրանքի անվանումը | Բրուտո Քաշը կգ | Նետտո Քաշը կգ | Լրացուցիչ միավոր | Հատի գինը | Ընդհանուր գինը USD |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ատամի խոզանակներ COLGATE 21,2գր. | 1,2 | 0,8 | 35 հատ | 3 | 105 |
| 2 | Վիրակապական միջոցներ | 1,8 | 1,2 | 6 հատ | 1,5 | 9 |
| 3 | Միանգամյա օգտագործման բժշկական նիտրիլե ստերիլ ձեռնոցներ 200հատ | 4 | 3,2 | 4հատ | 5 | 20 |
| 4 | Միանգամյա օգտագործման բժշկական լատեքսից ստերիլ ձեռնոցներ 100հատ | 0,6 | 0,5 | 1 հատ | 3 | 3 |
| 5 | Բժշկական գործիքների պլ.տուփեր | 0,7 | 0,5 | 7 հատ | 5 | 35 |
| 6 | Թղթյա տուփեր բժշկական գործիքների ստերիլիզացիայի համար 200հատ | 0,8 | 0,6 | 1 հատ | 15 | 15 |
| 7 | Ատամի խոզանակ | 0,1 | 0,1 | 100 հատ | 0,3 | 30 |
| 8 | Ատամնաբուժական գործիքներ | 0,3 | 0,2 | 6 հատ | 30,5 | 183 |
| 9 | Ասեղների մետաղյա տակդիրներ | 0,5 | 0,4 | 2 հատ | 20 | 40 |
| 10 | Մետաղյա ներարկիչներ առանց ասեղի | 0,4 | 0,3 | 3 հատ | 25 | 75 |
| 11 | Ռենտգեն նկարահանման ժամանակ ատամնաշարի արանքում դրվող թղթեր 1տուփ (500հատից) | 0,3 | 0,2 | 1 հատ | 20 | 20 |
| 12 | Ատամները փայլեցնող ապարատի գլխիկներ 1տուփ (100հատից) | 0,8 | 0,6 | 1 հատ | 35 | 35 |
| 13 | Ատամների քարերը մաքրող սարք SAPPHIRE SHAPPIRE DIODE LASER 1կոմպլ. | 2,8 | 2,4 | 1 հատ | 443 | 443 |
| 14 | Ատամների քարերը մաքրող սարք SCALEX 850 | 4,8 | 4,5 | 1 հատ | 500 | 500 |
| 15 | Մետաղյա տուփեր գործիքների համար | 27,5 | 25,5 | 100 հատ | 39 | 3900 |
| 16 | Ատամնաբուժական գործիքներ | 15,3 | 12,5 | 541 հատ | 30,5 | 16500,5 |
| 17 | Ուսուցողական գրականություն | 18 | 17 | 7 հատ | 40 | 280 |
| 18 | Գործիքները սրող էլ.գործիք HU-FRIEDY 3VDC | 0,7 | 0,5 | 1 հատ | 300 | 300 |
| 19 | Բժշկական գործիքների մանրէազերծիչ SWEEPZONE S310 | 10,6 | 9,6 | 1 հատ | 18 | 18 |
| 20 | Ատամի մածուկ COLGATE TOTAL 21.2գրամ | 6 | 3,35 | 158 հատ | 2,5 | 395 |
| 21 | Պլաստիկ պաշտպանիչ ակնոցներ | 0,5 | 0,5 | 5 հատ | 3 | 15 |
| 22 | Պոլիմերային սփռոց 1հատ | 0,2 | 0,2 | 1 հատ | 1 | 1 |
| 23 | Թելեր՝ օգտագործվող միջատամային տարածքները մաքրելու համար | 0,8 | 0,6 | 1հատ | 6 | 6 |
| 24 | Սոսինձ ատամների պրոթեզի համար | 0,2 | 0,12 | 12հատ | 2,5 | 30 |
| 25 | Polident հաբեր՝ջրի ախտահանման համար | 0,8 | 0,6 | 10հատ | 15 | 150 |
| 26 | Մետաղյա կախիչ 1հատ | 0,3 | 0,2 | 1հատ | 30 | 30 |
| 27 | Հեղուկ բերանի խոռոչի ողողման համար ACT 30մլ | 3,2 | 2 | 48 հատ | 1,8 | 86,4 |
| 28 | Ատամի մածուկ COLGATE MAXFRESH 28.3գրամ | 0,9 | 0,51 | 18հատ | 2,5 | 45 |
| 29 | Հեղուկ բերանի խոռոչի ողողման համար LISTERINE ZERO 1.5լ | 3,2 | 3 | 2 հատ | 2 | 4 |
| 30 | Կտորից պաշտպանիչ դիմակներ 50հատ | 0,35 | 0,3 | 1հատ | 6 | 6 |
| 31 | Միանգամյա օգտագործման թղթյա գոգնոցներ | 0,3 | 0,2 | 15 հատ | 0,5 | 7,5 |
| 32 | Ժել ատամների համար COMFORT GEL PACK | 0,5 | 0,4 | 2 հատ | 2 | 4 |
| 33 | Ատամնաբուժական չափանյութ 1հատ | 0,1 | 0,1 | 1հատ | 0,5 | 0,5 |
| 34 | Ատամի մածուկ SENSODYNE 23գր | 0,5 | 0,4 | 16հատ | 2,5 | 40 |
| 35 | Ակնոցները մաքրելու հեղուկ BENNETT FAMILY EYE CARE 1հատ | 0,5 | 0,4 | 1հատ | 3,5 | 3,5 |
| 36 | Պայուսակ պոլիմերային նյութերից | 0,3 | 0,3 | 1 հատ | 1 | 1 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 37 | Ատամները մաքրելու թելերի պլաստիկ բռնակներ և պլաստիկ ծայրակալներ գործիքների համար/15հատ/ | 0,5 | 0,4 | 1 հատ | 42 | 42 |
| 38 | Ատամնաբուժական հայելիներ | 1,5 | 1 | 100 հատ | 13 | 1300 |
| 39 | Մանեկեն 1հատ | 3 | 2 | 1հատ | 1704,5 | 1704,5 |
| 40 | Ատամները փայլեցնող մածուկ | 0,05 | 0,03 | 2հատ | 3 | 6 |
| 41 | Փայտյա շպատելներ 100հատ | 0,2 | 0,2 | 4 հատ | 4 | 16 |
| 42 | Պոլիմերային խալաթ 1հատ | 0,4 | 0,4 | 1 հատ | 0,5 | 0,5 |
| 43 | Ատամի մածուկ CREST 24գր | 0,4 | 0,3 | 12 հատ | 2,5 | 30 |
| 44 | Այցեքարտի պոլիմերային բեյջեր թելով | 0,7 | 0,7 | 1 հատ | 20 | 20 |
| 45 | Տեսաերիզներ գրառված (ուսուցողական) | 0,7 | 0,7 | 3 հատ | 1 | 3 |
| 46 | Հեղուկ բերանի խոռոչի ողողման համար PERDEX 473մլ | 2,1 | 1,5 | 2 հատ | 1,8 | 5,4 |
| 47 | Թելեր՝ օգտագործվող միջատամային տարածքները մաքրելու համար/100հատ/ | 0,6 | 0,5 | 1հատ | 6 | 6 |
| 48 | Պոլիմերային տոպրակներ /100հատ/ | 0,4 | 0,4 | 2հատ | 5 | 10 |
| 49 | Արյան ճնշման չափիչ սարք CVS pharmacy 3MD1-CVS | 0,8 | 0,7 | 1 հատ | 25 | 25 |
| 50 | Պոլիմերային տոպրակներ 1հատ | 0,2 | 0,2 | 1հատ | 5 | 5 |
| 51 | Կտորից պաշտպանիչ դիմակներ 50հատ | 0,3 | 0,2 | 1հատ | 6 | 6 |
| 52 | Ատամի մածուկ ENAMEL PRO 25հատ | 1 | 0,8 | 2հատ | 20 | 40 |
| 53 | Ախտահանիչ փոշի BRITE SHIELD 1տուփ | 1 | 0,8 | 1հատ | 25 | 25 |
| 54 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սրոչ) 1փաթեթ | 1 | 0,8 | 1հատ | 10 | 10 |
| 55 | Թղթյա տոպրակներ գործիքների համար 1տուփ (200հատից) | 1 | 0,8 | 1հատ | 15 | 15 |
| 56 | Ատամի մածուկ PRONAMEL 23գր | 0,4 | 0,3 | 12հատ | 9,8 | 117,5 |
| 57 | ORAL-B-ի ուսումնական ցուցավահանակ՝իր պարագաներով 1հատ | 1 | 0,8 | 1հատ | 17 | 17 |
| 58 | Հեղուկ բերանի խոռոչի ողողման համար COLGATE 60մլ | 2 | 1,8 | 30հատ | 3 | 90 |
| 59 | Ատամի խոզանակներ | 0,9 | [illegible] | 100 հատ | 3 | 300 |
| | Ընդամենը | 130 | 109,81 | | | 27130,3 |

«Հերացու անվ.Պետ.Բժշկ.Համալս.»ՊՈԱԿ

ՌԵԿՏՈՐ Մ.Զ.Նարիմանյան

✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1288 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս.Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27–ի N 07/80-2/21454-14 և դեկտեմբերի 2-ի N 06/5-1/21929-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 9–ի N ԱՄ/22.2/13117-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (դեղ, մեկանգամյա օգտագործման ներարկիչներ ու ասեղներ, 2 տեղ, 78 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող դեղը, մեկանգամյա օգտագործման ներարկիչներն ու ասեղները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1289 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 07/80-2/20494-14 և նոյեմբերի 20-ի N 06/5-1/20669-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 17-ի N ԱՄ/22.2/12082-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հեմոֆիլիայի համաշխարհային ֆեդերացիայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (ներարկման լուծույթի լիոֆիլացված դեղափոշի, 2 տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, 20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 413.60 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1290 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 20-ի N 07/80-2/20723-14 և նոյեմբերի 25-ի N 06/5-1/21068-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N ՎՊ/22.2/12216-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդություն-ների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (3 տեղ, 67 կգ ընդհանուր քաշով, 3,357,954.55 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9419.54 ռուսական ռուբլի, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվան-դությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաս-տատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1291 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/21798-14 և դեկտեմբերի 3-ի N 06/5-1/22019-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱՍ/22.2/12667-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (պատվաստանյութ, 3 տեղ, 345.5 կգ ընդհանուր քաշով, 414,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1597.87 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1292- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ- 227 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/20917-14 և դեկտեմբերի 9-ի N 06/3-3/22658-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «բնակարաններ» ծրագրի մասին N Մ-227-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «16,000,000» թիվը փոխարինել «23,250,000» թվով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից*

*Գործադիր տնօրեն՝ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ*

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
Բնակարաններ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի անվանումը | Երևան քաղաքում ապրող փախստականներին և կարիքավորներին բնակարանի անհատույց տրամադրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ /հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Մալիշկա, ՀՎՀՀ 08906104/: |
| 4. | Ծրագիրն իրականացնողը | «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ /հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Մալիշկա, ՀՎՀՀ 08906104/: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն,Երևան քաղաքի Բաբաջանյան փող.38 և 39 շենքի բնակարանների անհատույց տրամադրում նույն շենքում բնակվող փախստականներին և կարիքավորներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 23.250.000/քսաներեք միլիոն երեկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,որը բաղկացած է նվիրատվության ենթակա 12 բնակարանների արժեքից 22.500.000,0ՀՀ դրամից և կազմակերպչական ծախսեր 750000,00ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևան քաղաքի Բաբաջանյան փող. 38 և 39 շենքերում բնակվող փախստականներ և կարիքավորներ, որոնց կազմը ներկայացված է սույն ծրագրին կից/սոցիալական/: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | ծրագրի սկիզբը 2012թ.-ի ապրիլից մինչև 2015թ.-ի մայիսը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունն և ժամկետների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի կնքում՝ նոտարական վավերացմամբ: Նվիրատվության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում լիազոր պետական գրանցում իրականացնող մարմնում: Ծրագրի իրականացում 2012թ.-ի և 2015թ.-ն: |
| 10. | Ձեռք բերվող/ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը:՝ | Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարության առընթեր միգրացիոն պետական ծառայության կողմից ներկայացված փախստականների ցանկի և դիմումների հիման վրա 12 բնակարանների նվիրատվության իրականցում 22.500.000,0 ՀՀ դրամ արժեքով և կազմակերպչական ծախսեր 750000,0ՀՀ դրամ: |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ /եթե համագործակցություն նախատեսվում է/, համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը | Ծրագիրը իրաանացվելու է ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր միգրացիոն պետական ծառայության հետ: |
| 12. | Գործարքները, որոնցով ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում | Ակնկալվում է հարկային արտոնություններ՝ազատում ավելացված արժեքի հարկից և եկամտահարկից: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը /եթե վերահսկողություն նախատեսվում է/ | Վերահսկողությունը կատարվելու է «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրի համակարգման հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1293 - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ 2014-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (1-ԻՆ ՓՈՒԼ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/22452-14 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21985-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/9585-14 և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 03/07-1/14807-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող՝ 55,000,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ 2014-2015 թվականների զարգացման ծրագիրը (1-ին փուլ)(կցվում է):

2. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ  Է

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
ռեկտոր Ա.Ռ. Դարբինյանի կողմից
«24» նոյեմբերի 2014թ.

## Հայ-Ռուսական Համալսարանի 2014-2015 թվականների զարգացման ծրագիր (1 փուլ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակներն են՝<br>• Ժամանակակից գիտական ուղղությունների ու նորարարական մտքի զարգացումն ու Հայաստանում գիտական ազգային ռեսուրսի ստեղծումն ու ընդլայնումը:<br>• Հայաստանում բնագիտական ուղղությունների զարգացումը, այդ ոլորտում գիտական ներուժի մեծացումը:<br>• ՀՀ գիտության ինտեգրումը համաշխարհային գիտական և հետազոտական հանրությանը և միջազգային մակարդակում նշանակության բարձրացումը՝ ՀՌՀ և ՌԴ առաջատար գիտական կենտրոնների միջև համագործակցության միջոցով, որոնցից են Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, «ՄԻՖԻ» միջուկային հետազոտությունների ազգային ինստիտուտը, Սանկտ-Պետերբուրգի պետական պոլիտեխնիկական համալսարանը և այլն:<br>• Հայաստանում փորձնական և կիրառական գիտության, ինչպես նաև |

| | | |
|---|---|---|
| | | դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի և ինովացիոն տեխնոլոգիաների զարգացումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործ | Ռուսաստանի Դաշնության կառավարություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան<br>ՀՀ, քաղ. Երևան, 0051, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, ՀՀ, քաղ. Երևան 0051, Հովսեփ Էմինի 123:<br>Բնագավառը՝ կրթություն և գիտություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ունի շարունակական բնույթ: Ներկայացվող առաջին փուլի բյուջեն կազմում է 55 000 000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ: Ծախսերի նախատեսվող ուղղություններն են.<br>- լաբորատոր սարքավորումներ – 24 810 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ.<br>- ծրագրային ապահովման միջոցներ և տեխնիկական լուծումներ – 24 065 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ.<br>- ծառայություններ և աշխատանքներ – 6 125 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ. |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանողները, ասպիրանտները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 15 դեկտեմբեր 2014<br>Ծրագրի ավարտը՝ 30 հունիս 2015 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ.-ի դեկտեմբերի 15-ից մինչև 2015թ.-ի հունիսի 30 ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>1. **Տեսացրող զոնդային մանրադիտակի գնում (ներմուծում):**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսացրող զոնդային մանրադիտակի ձեռքբերման պայմանագիր: Տեսացրող զոնդային մանրադիտակի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 4 100 000 ռուբլուն համարժեք դրամ: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականցվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման ներմուծումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>2. **Ջերմային վառարանի գնում (ներմուծում):**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել ջերմային վառարանի ձեռքբերման պայմանագիր: Ջերմային վառարանի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականցվելու է միջազգային մրցակցային գնանշում:<br>Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6 100 000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>3. **Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումներ և** |

| | | |
|---|---|---|
| | | **համալրող սարքեր:**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերման պայմանագիր: Սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականցվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 16 400 000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>4. **Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների գնում:**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ձեռքբերման պայմանագիր: Տեսա և ձայնային տեխնիկայի ձեռքբերման նպատակով իրականցվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 3 500 000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>5. **Այլ լաբորատոր սարքավորումներ**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման պայմանագրեր: Այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականցվելու է միջազգային մրցակցային գնանշում: |

| | | |
|---|---|---|
| | | Նախատեսվում է այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերում 14 610 000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր գումարի չափով:<br>6. **Այլ միջոցառումներ**<br>Նախատեսվում է իրականացնել 10 290 000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. **Տեսացրող զոնդային մանրադիտակի ներմուծում:**<br>Տեսացրող զոնդային մանրադիտակը նախատեսված է մագնիսային հատկությունների ուսումնասիրության, կորերի վերլուծության, թունելային մեթոդով հետազոտությունների իրականացման համար: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 4 100 000 ռուբլուն համարժեք դրամ:<br>2. **Ջերմային վառարանի ներմուծում:**<br>Ջերմային վառարանը թույլ է տալիս իրականացնել բարձր ջերմաստիճանային (մինչև 2000°C) միջավայրի ստեղծում, ինչպես նաև այդ միջավայրում նյութերի ջերմամշակման համար: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6 100 000 ռուբլուն համարժեք դրամ:<br>3. **Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և** |

| | | |
|---|---|---|
| | | **համալրող սարքերի ներմուծում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված, հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերումը ուղղված է միջբուհական գիտակրթական համագործակցության ապահովման, ինչպես նաև արտասահմանյան կրթական լավագույն փորձի և նոր մոտեցումների ներդրմանը:<br>Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 16 400 000 ռուբլուն համարժեք դրամ:<br>4. **Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ներմուծում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված սարքավորումները նախատեսված են ուսումնական գործընթացի շրջանակներում կազմակերպվող և իրականացվող տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) համար:<br>Սարքավորմների նախահաշվային արժեքը կազմում է 3 500 000 ռուբլուն համարժեք դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 5. **Այլ լաբորատոր սարքավորումների գնում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված այլ լաբորատոր սարքավորումները պետք է ծառայեն գիտական ուսումնասիրությունների, հետազոտությունների և վերլուծությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացին օժանդակելու և ուսանողներին գիտական գործընթացի մեջ ներգրավելու նպատակին: Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում 14 610 000 ռուբլուն համարժեք դրամ:<br>6. **Այլ միջոցառումներ:**<br>Նախատեսվում է իրականացնել 10 290 000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներկայացնել ընթացիկ և վերջնական ֆինանսական հաշվետվություններ ՌԴ Կրթության և գիտության նախարարություն, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1294 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/22437-14 և 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 06/3-3/21993-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 02/9654-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N ՖԲ/ԱնՄ-4/9852-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 101/104.3.2/5850-14 եզրակացություն-ները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,966,532 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 1 մանկապարտեզի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-տակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 04423145) և «ԼԵՎ.ՎԱՆ.ԹՈՎ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 04419045) հետ 2014 թվականի նոյեմբերի 19-ին կնքված N WVA/STEPADP-HEA/SW-15/001/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,966,532 դրամի չափով (3,726,336 դրամի չափով «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի կողմից և 240,196 դրամի չափով «ԼԵՎ.ՎԱՆ.ԹՈՎ» ՍՊԸ-ի կողմից), առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Տիգրայր Երիցյան

18 նոյեմբերի 2014թ.

**«ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 1 մանկապարտեզի մասնակի վերանորոգում»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է մասնակի վերանորոգել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 1 մանկապարտեզը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Մերձավոր Արևելք և Արևելյան Եվրոպայի գրասենյակ<br>Հասցե՝ Կիպրոս, Նիկոսիա, 62 Perikleous Street, 2021 Strovolos, Հեռ. +357-22-870277 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաք<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,966,532 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 1 մանկապարտեզը |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 նոյեմբերի 2014թ. – 30 դեկտեմբերի 2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. նոյեմբերի 20-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մասնակի վերանորոգել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 1 մանկապարտեզը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,966,532 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, որից 3,726,336 (երեք միլիոն յոթ հարյուր քսանվեց հազար երեք հարյուր երեսունվեց) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի կողմից, իսկ 240,196 (երկու հարյուր քառասուն հազար հարյուր իննսունվեց) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «ԼԵՎ.ՎԱՆ.ԹՈՎ» ՍՊԸ-ի կողմից: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 1 մանկապարտեզում նախատեսվում է իրականացնել մասնակի վերանորոգում:<br>Վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է կազմակերպություն և շինարարական կապալի պայմանագիր է կնքել «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի և «ԼԵՎ.ՎԱՆ.ԹՈՎ» ՍՊԸ-ի հետ, որոնք պայմանագրում համատեղ հանդիսանում են որպես կապալառու:<br>«Ալեն-Էլեն» ՍՊԸ-ն իրականացնելու հին փայտյա պատուհանների ապամոնտաժում, նոր մետաղապլաստե բացվող և չբացվող պատուհանների մոնտաժում, պլաստմասե պատուհանագոգերի և մետաղապլաստե դռների տեղադրում: «ԼԵՎ.ՎԱՆ.ԹՈՎ» ՍՊԸ-ն կատարելու է գաջե շաղախով պատերի շեղությունների սվաղմամ և ցեմենտե շաղախով արցունքաթափերի վերանորոգման աշխատանքները: շխատանքներն սկսվել են 2014թ. նոյեմբերի 20-ին և ավարտվելու են մինչև 2014թ. դեկտեմբերի 30-ը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,966,532 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, որից 3,726,336 (Երեք միլիոն յոթ հարյուր քսանվեց հազար երեք հարյուր երեսունվեց) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի կողմից, իսկ 240,196 (երկու հարյուր քառասուն հազար հարյուր իննսունվեց) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «ԼԵՎ.ՎԱՆ.ԹՈՎ» ՍՊԸ-ի կողմից:<br>Նշված երկու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները հաստատվելու են նրանցից յուրաքանչյուրի հետ ստորագրված կատարողական ակտերով և այդ ակտերի հիման վրա ներկայացված առանձին հաշիվ-ապրանքագրերով:<br>Ակնկալվում է, որ տվյալ ծրագրի շրջանակներում հարակից ճանաչված գործարքի ներքո ԱԱՀ-ից ազատում կտրամադրվի առանձին՝ համապատասխանաբար «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի կողմից և «ԼԵՎ.ՎԱՆ.ԹՈՎ» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքների գումարների չափով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագիրը «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իրականացնելու է ՀՀ Լոռու մարզպետարանի, Ստեփանավանի քաղաքապետարանի և թիվ 1 մանկապարտեզի հետ համագործակցությամբ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Ստեփանավանի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Մերձավոր Արևելք և Արևելյան Եվրոպայի գրասենյակի հետ համատեղ:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1295 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/22408-14 և 2014 թվականի դեկտեմբերի 5-ի N 06/3-3/22325-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 02/9664-14 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/14.2/4049-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,782,469 դրամ ընդհանուր արժողությամբ «Կահույքի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի հինգ համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝.

«Ագաթ-777» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2014 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N WVA/APAR ADP/SF-15/001/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի մատակարարում՝ 3,782,469 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
ծրագրի տնօրեն՝ Ժիրայր Եդիլյան

10 նոյեմբերի 2014թ.

**«Կահույքի մատակարարում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի հինգ համայնքներին»**
**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Շենավան, Արագած և Ծաղկաշեն համայնքների միջնակարգ դպրոցներին և Ապարան, Արագած և Լուսագյուղ համայնքների մանկապարտեզներին՝ բարելավելու դասարանների գույքային պայմանները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակ Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը *Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Շենավան, Արագած, Ծաղկաշեն, Ապարան և Լուսագյուղ համայնքներ<br>Բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ է 3,782,469 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Շենավան, Արագած և Ծաղկաշեն համայնքների միջնակարգ դպրոցներն ու Ապարան, Արագած և Լուսագյուղ համայնքների մանկապարտեզները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 12 նոյեմբերի 2014թ. – 30 դեկտեմբերի 2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2014թ. նոյեմբերի 12-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կահույք մատակարարել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Շենավան, Արագած և Ծաղկաշեն համայնքների միջնակարգ դպրոցներին և Ապարան, Արագած և Լուսագյուղ համայնքների մանկապարտեզներին: Ծրագրի բյուջեն կազմում է՝ է 3,782,469 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |



<table>
<tr>
<td>10.</td>
<td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td>
<td>
ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Շենավան, Արագած և Ծաղկաշեն համայնքների միջնակարգ դպրոցների և Ապարան, Արագած և Լուսագյուղ համայնքների մանկապարտեզների գույքային պայմանները բարելավուլու նպատակով վերջիններիս տրամադրվելու է կահույք՝ համաձայն տորև ներկայացված աղյուսակի.
<table>
<tr><th>N</th><th>Համայնք</th><th>Մատակարարվող գույք</th><th>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</th></tr>
<tr><td>1.</td><td>Շենավան համայնքի դպրոց</td><td>✓ աշակերտական սեղաններ և աթոռներ տարրական դասարանների համար<br>✓ աշակերտական սեղաններ և աթոռներ ավագ դասարանների համար</td><td>978,678 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>2.</td><td>Արագած համայնքի թիվ 1 դպրոց</td><td>✓ աշակերտական սեղաններ և աթոռներ միջին դասարանների համար<br>✓ գրապահարաններ<br>✓ գրատախտակներ</td><td>896,640 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>3.</td><td>Ծաղկաշեն համայնքի դպրոց</td><td>✓ գրադարանի գրապահարաններ<br>✓ կախիչներ</td><td>269,070 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>4.</td><td>Արագած համայնքի մանկապարտեզ</td><td>✓ գրապահարաններ<br>✓ խաղալիքի պահարաններ</td><td>288,226 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>5.</td><td>Լուսագյուղ համայնքի մանկապարտեզ</td><td>✓ գրապահարան<br>✓ խաղալիքի պահարաններ<br>✓ մանկական զգեստապահարաններ</td><td>363,025 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>6.</td><td>Ապարանի թիվ 1 մանկապարտեզ</td><td>✓ գրապահարաններ<br>✓ մանկական երկհարկանի մահճակալներ</td><td>986,830 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td colspan="3">Ընդամենը:</td><td>3,782,469 ՀՀ դրամ</td></tr>
</table>
Կահույքի մատակարարումն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է կազմակերպություն և պայմանագիր է կնքել «ԱԳԱԹ» ՍՊԸ-ի հետ: Կահույքի մատակարարումը նախատեսվում է ավարտել մինչև 2014թ. դեկտեմբերի 30-ը:<br>
Ծրագրի բյուջեն կազմում է՝ է 3,782,469 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Շենավան, Արագած և Ծաղկաշեն համայնքների միջնակարգ դպրոցների և Ապարան, Արագած և Լուսագյուղ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և մանկապարտեզների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի, Ապարանի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան K. Hayar

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1296 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/21012-14 և նոյեմբերի 11-ի N 06/18-4/19786-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 02/9213-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 12-ի N ՖԲ/ԱնՄ-4/9123-14 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 12-ի N 01/07-1/13961-14 եզրակացությունները,* ***որոշում է***

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) 2014 թվականին նոյեմբերի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը իրականացվող՝ 1,382,720,760 դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության հասցեով ստացված դյուրակիր համակարգիչը, համակարգչի տակդիրը և պայուսակը (1 տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 1,347.65 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 383.45 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարա-րություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան
Ներկայացուցչության տնօրեն՝
Արսեն Մտեփանյան

...........................

17-ը նոյեմբերի 2014 թ.

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող
ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նպաստել Հայաստանում երեխաների և երիտասարդների սոցիալ-տնտեսական և կրթական շահերի պաշտպանությանը և բարեկեցության բարձրացմանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ (հասցե՝ ԱՄՆ, 20036 ք. Վաշինգտոն , 2000 L փ. NW, բն. 500, հեռ.՝ 001 (202) 640-6775, կայք՝ www.savethechildren.org)<br><br>Սեյվ դը չիլդրեն Նիդերլանդներ (հասցե՝Նիդերլանդներ, ք. Լաան Վան Նյու Ուստ-Ինդի 14-16 – 2593 BT, հեռ.՝ 0031 (0)70 338 44 48 , կայք՝ www.savethechildren.nl)<br><br>Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ (հասցե՝ Մեծ Բրիտանիայի Թագավորություն, ք. Լոնդոն, Սթ. Վինսենթ Հաուզ 30 Օրանժ փ, հեռ. 0044 (0) 203 272 0300, կայք՝ https://www.savethechildren.net) |
| 4 | Ծրագրի կատարողը | Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան ներկայացուցչություն<br>Ք. Երևան, Ազատության 27, ՀՎՀՀ 02251537 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Երևան<br>Բնագավառը՝ սոցիալ-տնտեսական և կրթական |



| | | |
|---|---|---|
| 6 | Ծրագրի բյուջեն | 1,382,720,760 ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործության ստացողներն են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 400 հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, 1 833 փախստականներ Սիրիայից, մոտ 200 000 վերարտադրողական տարիքի անձինք, խնամքի տարբեր հաստատություններում գտնվող 80 երեխա: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9 | [illegible] ֆինանսական միջոցների ծավալը | Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան ներկայացուցչությունը 2014թ. դեկտեմբեր-2016թ. դեկտեմբեր ամիսների ընթացքում նախատեսում է իրականացնել հետևյալ գործողությունները.<br><br>*1. Հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով*<br><br>Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման միջոցով կենսամակարդակի բարելավման նպատակով նախատեսվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական զբաղվածության գործակալության համար ձեռք բերել և ներմուծել «ՖՈՐԴ ՏՐԱՆԶԻՏ» մակնիշի ավտոմեքենա և մտավոր ու ֆիզիկական կարողությունները չափող 6 հատ սարքավորում (MAST), ինչը հնարավորություն կտա մատուցել զբաղվածության ապահովման ծառայություններ հեռավոր վայրերում բնակվող և տեղաշարժման/տրանսպորտային խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց: Նախատեսվում է նաև իրականացնել բոլոր 51 զբաղվածության կենտրոնների, 46 նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական/ՄԿՈՒ հաստատությունների, 18 հատուկ և գիշերօթիկ դպրոցների, ինչպես նաև մրցութային կարգով ընտրված ավելի քան 150 բիզնես կառույցների աշխատակիցների հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքի կարողությունների զարգացում՝ դասընթացների և գործնական աշխատանքների միջոցով: Դրա հետ մեկտեղ ավելի քան 400 հաշմանդամություն ունեցող անձինք կուղորդվեն զբաղվածության կենտրոններ գրանցվելու, և կստանան մասնագիտական կարողությունները գնահատելու, ինչպես նաև «կյանքի հմտությունների և աշխատանքի պատրաստվածության» դասընթացներին մասնակցելու հնարավորություն:<br><br>Վերոնշյալ միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են 1,012,748,176 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. դեկտեմբերից մինչև 2016 թ. օգոստոս ամիսները:<br><br>*2. Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար աղետների ռիսկի նվազեցում (ԱՌՆ)*<br><br>Հատուկ կարիքներ ունեցող երեխաների պատրաստվածությունը աղետների ռիսկերի հանդեպ բարձրացնելու նպատակով նախատեսվում է Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի, ինչպես նաև Երևանի 62 հաստատություններում (ներառյալ 21 հատուկ հանրակրթական դպրոց և խնամքի |

հաստատություն, 21 մանկապարտեզ և 20 ներառական դպրոց, որոնք ընտրվել են ելնելով հատուկ կարիքներով երեխաների թվից) բարելավել հաստատությունների տարհանման ելքերը, տրամադրել լուսա-ձայնային համակարգ, տարհանման նշաններ, հակահրդեհային և առաջին օգնության պարագաներ, ինչպես նաև վերապատրաստել ուսուցիչներին և խնամատարներին, կազմակերպել հատուկ կարիքներ ունեցող երեխաների աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ կրթությունը և իրականացնել տարհանման ու ապահով ապաստան գտնելու վարժանքներ:

Վերոնշյալ միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են 42,634,920 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. դեկտեմբերից մինչև 2015 թ. հուլիս ամիսները:

***3. Փախստականների ներուժի զարգացման և բարեկեցության խթանում***

Երևանում և հարակից շրջաններում բնակվող սիրիահայ փախստական կանանց և երիտասարդների աշխատանքային հնարավորությունները բարձրացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել կարճաժամկետ մասնագիտական ուսուցում՝ հաշվի առնելով շահառուների նախասիրություններն ու Աշխատանքի պետական գործակալության կողմից իրականացվող շուկայի ուսումնասիրությունները: Ուսուցմանը կմասնակցեն թվով **150** Սիրիայից փախստական կանայք և երիտասարդներ, որոնք կընտրվեն կարիքների գնահատման հիման վրա: Ուսուցումը կկազմակերպվի Երևանի 5 պետական մասնագիտական ուսուցում իրականացնող հաստատություններում: Մասնագիտական կրթություն ստացած շահառուներից **50**-ը աշխատանքի կտեղավորվեն Երևանի 10 զբաղվածության կենտրոնների աջակցությամբ: Միևնույն ժամանակ առնվազն 40 փախստական կանանց և/կամ երիտասարդների հնարավորություն կտրվի անցնել մեկ կամ երկամյա ուսուցում և պրակտիկա՝ հետագայում աշխատանքի անցնելու հնարավորությամբ: Այս նպատակով կանցկացվեն նաև դասընթացներ Կյանքի հմտություններ և զբաղվածության պատրաստակամություն թեմայով, որոնց կմասնակցեն առնվազն **90** փախստականներ:
Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար կհայտարարվի մրցույթ և առաջարկները կդիտարկվեն ընտրող հանձնաժողովի կողմից, որից հետո փոքր դրամաշնորհներ կտրամադրվեն **30** շահառուների ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար՝ նախապատվությունը տալով միայնակ կանանց և երտասարդներին: Մրցույթին մասնակցելու նպատակով թվով **45** շահառու կանցնի բիզնես պլանի կազմման, ինչպես նաև հարկային և իրավական հարցերով ուսուցում:
Շահառուների կարիքների և ռիսկերի գնահատման համար կստեղծվեն դեպքի վարման թիմեր, ովքեր կիրականացնեն Սիրիայից Հայաստան ժամանած 220 ընտանիքների / ընդհանուր թվով **770** անձանց/ կարիքների գնահատում և կարիքի դեպքում կտրամադրեն նաև հոգեբանական աջակցություն:
Կձևավորվի ակտիվ կանանց 3 խումբ, որոնց կողմից առաջարկված համայնքային գործողությունների



համար ծրագրի շրջանակներում կտրամադրվի աջակցություն: Ընդհանուր առմամբ աջակցություն կստանան փախստականների և այլ անապահով խմբերի կարիքների լուծմանը միտված 6 նախաձեռնություն, որից ուղղակիորեն կօգտվեն առնվազն 448 փախստականներ:
Փախստական կանանց ինտեգրմանը նպաստելու նպատակով Երևանում կհիմնվի երկու ակումբ, որոնց նպատակը կլինի կազմակերպել սոցիալական և մշակութային ինտեգրմանը նպաստող միջոցառումներ, ինչպիսիք են թեմատիկ ֆիլմերի դիտումը և թեմատիկ զրույցները: Նախատեսվում է առնվազն **180** փախստական կանանց ընդգրկել վերոնշյալ միջոցառումներին՝ որոնք կհայտնաբերվեն փախստական համայնքների հետ աշխատանքի ընթացքում:
Սիրիահայ երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելիությունը բարձրացնելու նպատակով կստեղծվի 3 նախադպրոցական ուսուցման կենտրոն Երևանի 2 դպրոցներում և 1 մանկապարտեզում, որոնք կառաջադրվեն Երևանի քաղաքապետարանի կողմից: Այդ նպատակով կվերանորոգվեն և կկահավորվեն հատկացված սենյակները, ինչպես նաև կանցկացվեն վերապատրաստման դասընթացներ աշխատակիցների համար: Կտրամադրվեն նաև անհրաժեշտ կրթական նյութեր: Արդյունքում առնվազն 30 սիրիահայ երեխաներ, որոնք ներկայումս չեն հաճախում նախադպրոցական կենտրոններ սահմանափակ տեղերի պատճառով, հնարարավորություն կստանան ստանալ նախադպրոցական կրթություն:

Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 99,926,528 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 **թ.** դեկտեմբերից մինչև 2016 թ. սեպտեմբեր ամիսները:

**4. Խոցելի երեխաների սոցիալական ներառում՝ երեխայի այլընտրանքային խնամքի, ընտանեկան աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնման միջոցով**

Երեխայի այլընտրանքային խնամքի, ընտանեկան աջակցության և ներառական կրթության ծառայությունների բարելավման նպատակով նախատեսվում է մշակել համապարփակ խնամատարության մոդել՝ հիմնվելով համաշխարհային լավագույն ստանդարտների վրա, ինչպես նաև հաշվի առնելով հայաստանյան առանձնահատկությունները: Մոդելը կներկայացվի Կառավարության հաստատմանը:
Երևանում և Լոռու, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում կհիմնադրվեն 6 խնամատար ընտանիքների աջակցման կենտրոններ, որոնք ծառայություն կմատուցեն խնամատար ընտանիքներին և խնամքի տակ գտնվող երեխաներին: Կմշակվեն նյութեր խնամատարության տարատեսակ ձևերի վերաբերյալ, որոնց օգնությամբ կվերապատրաստվեն 6 աջակցման կենտրոնների 12

մասնագետ: Դիմումների և մշակվելիք չափանիշների հիման վրա ընտրված ընտանիքների (թվով 180 խնամատար ընտանիք) անդամները նույնպես կանցնեն վերապատրաստումների շարք՝ մինչ խնամատար ընտանիք դառնալը:

Ծրագրի արդյունքում Երևանի և Լոռու, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արագածոտնի խնամքի 17 հաստատություններում գտնվող 80 երեխաներ, որոնք հնարավորություն չունեն վերամիավորվելու իրենց կենսաբանական ընտանիքների հետ, կտեղավորվեն խնամատար ընտանիքներում:

Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 19,833,686 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. դեկտեմբերից մինչև 2016 թ. ապրիլ ամիսները:

**5. Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության**

Նախաձեռնության նպատակն է բարձրացնել նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիությունը և բարելավել դպրոցական տարիքի երեխաների առողջության և սննդի հետ կապված խնդիրները: Սա նախաձեռնության երկրորդ փուլն է՝ առաջին փուլը իրականացվել է Արմավիրի, Արագածոտնի և Գեղարքունիքի 12 գյուղական համայնքներում 2011թ.-ի հունվարից 2013թ-ի դեկտեմբեր ամիսների ընթացքում: Նախաձեռնության երկրորդ փուլը իրականացվելու է 2014թ. նոյեմբեր - 2016թ. օգոստոս ամիսների ընթացքում Գեղարքունիքի և Լոռու մարզերի 8 գյուղական համայնքներում, որտեղ ներկայումս չկան գործող մանկապարտեզներ, իսկ դպրոցներում խպառ բացակայում են կամ առկա են վատթար սանիտարական պայմաններ: Ծրագրի շրջանակներում ընտրված վեց գյուղական համայնքների դպրոցներում կստեղծվեն նախադպրոցական կրթության կենտրոններ, որոնք ամբողջովին կվերանորոգվեն և կկահավորվեն: Կենտրոններին կից կստեղծվեն սանհանգույցներ՝ հարմարեցված 4-6 տարեկան երեխաների կարիքներին: Կկազմակերպվեն վերապատրաստման նախադպրոցական կրթության դասընթացներ համայնքներից ընտրված մանկավարժների համար: 10 ամիս տևողությամբ նախադպրոցական կրթության դասընթացներ կկազմակերպվեն 5-6 տարեկան երեխաների համար՝ շաբաթական 5 օր և օրական 4 ժամ տևողությամբ: Կստեղծվեն «Ծնողական ռեսուրս կենտրոններ» և կկազմակերպվի ծնողական կրթություն 0-6 տարեկան երեխաներ ունեցող ծնողների համար: Ընտրված դպրոցներում կվերանորոգվեն յուրաքանչյուրում առնվազն 2 զուգարան (տղաների և աղջիկների համար առանձնացված), որոնք ապահովված կլինեն մշտական հոսող ջրով և կոյուղիով, կտեղադրվի նոր սանիտարական տեխնիկա: Ի լրումն, երկու գյուղական համայնքներում, որոնք ընդգրկված էին ծրագրի առաջին փուլում, կշարունակվեն աշխատանքները առողջ ապրելակերպը խթանելու նպատակով և կվերանորոգվեն դպրոցների մարզադահլիճները, հանդերձասրահները և մարզադահլիճները կհամալրվեն



համապատասխան մարզական գույքով:

Ծրագրի համար նախատեսված ծախսերը կազմում են 91,774,280 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. դեկտեմբերից մինչև 2016 թ. օգոստոս ամիսները:

**6. Սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման նվազեցում:**

Նախաձեռնության նպատակն է նպաստել սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատումների նվազեցմանը Հայաստանում: Նախաձեռնությունն իրականացվելու է Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում՝ ընդգրկելով 22 քաղաքային համայնք մարզերում և 3 համայնք Երևանում: Նախաձեռնության շրջանակներում կտպագրվեն և կտարածվեն 200,000 թերթոն և 300 տեղեկատվական գրքույկ սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման բացասական ազդեցության վերաբերյալ: Բնակչության իրազեկությունը բարձրացնելու նպատակով կիրականացվեն հեռուստատեսային ծրագրեր վերարտադրողական տարիքի անձանց մասնակցությամբ: Կկազմակերպվեն վերապատրաստումներ կանաց վերարտադրողական առողջություն իրականացնող 100 բուժ աշխատողների մասնակցությամբ, որոնք կընտրվեն ընդգրկված համայնքներից (չորս բուժաշխատող յուրաքանչյուր համայնքից):

Ծրագրի համար նախատեսված ծախսերը կազմում են 61,503,170 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. դեկտեմբերից մինչև 2016 թ. դեկտեմբեր ամիսները:

Կազմակերպչական ծախսերը նախատեսված են 54,300,000 դրամի չափով:

10 Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

| Անվանումը | Ընդամենը (ՀՀ դրամ) |
|---|---|
| Դպրոցների և նախադպրոցական հաստատությունների վերանորոգում, կահավորում և աշխատակազմի ուսուցում: | 84,531,506 |
| Դպրոցների և նախադպրոցական հաստատությունների աշխատակիցների ուսուցում աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ, նյութերի մշակում ու տպագրություն | 6,186,744 |
| Դպրոցների և նախադպրոցական հաստատությունների հարմարեցում աղետների ռիսկերի նվազեցման պահանջներին | 22,704,000 |

| Անվանումը | Ընդամենը (ՀՀ դրամ) |
|---|---|
| Հատուկ հաստատությունների երեխաների համար խնամատարության մոդելի ուսումնասիրություն, մշակում, խնամատար ընտանիքների ընտրություն և օժանդակություն: | 15,666,776 |
| Մեքենայի ձեռքբերում և ներմուծում հաշմանդամություն ունեցող անձանց համար շարժական զբաղվածության կենտրոնի ստեղծման նպատակով | 15,298,800 |
| Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կարողությունների չափման նպատակով 6 ՄԱՍՏՏ տեստերի ձեռքբերում և ներմուծում | 613,965 |
| Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական և աշխատանքային ինտեգրման նպատակով աշխատաժողովների, հանդիպումների, ուսուցումների կազմակերպում, նյութերի մշակում, թարգմանություն | 23,301,981 |
| Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և աշխատանքի իրավունքների վերաբերյալ նյութերի մշակում և հրապարակում | 5,123,488 |
| Փախստականների մասնագիտական ուսուցման, կյանքի հմտությունների և բիզնես պլանի պատրաստման դասընթացներ | 32,784,121 |
| Փախստականների սոցիալ-մշակութային կենտրոնների ստեղծում | 10,789,680 |
| Դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում փախստական երեխաների ինտեգրմանն ուղղված աշխատանքներ | 19,330,839 |
| Դեպքերի վարման ուսուցում և աջակցում | 5,527,698 |
| Սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման բացասական հետևանքների վերաբերյալ տեղեկատվական և կրթական նյութերի մշակում և տպագրություն | 3,274,020 |
| Սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման բացասական հետևանքների վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով համայնքային ակտիվ խմբերի հետ հանդիպումների և ուսուցման կազմակերպում | 8,959,091 |
| Միջոցառումների իրականացման տրանսպորտային ծախսեր | 42,437,497 |
| Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում | 4,778,585 |
| Հանրային տեղեկատվական աշխատանքներ, աշխատաժողովների կազմակերպում, նյութերի մշակում և տպագրություն | 43,556,010 |
| Ծրագրի գնահատում | 2,818,200 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **347,683,001** |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմա- | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են հետևյալ կազմակերպչական ծախսերը. |



| | | |
|---|---|---|
| | կերպչական ծախսերը | • Գրասենյակային տարածքի վարձակալության և սպասարկման ծախսերը մեկ տարվա կտրվածքով կազմում են 19,000,000 ՀՀ դրամ, իսկ ծրագրի ողջ տևողության համար՝ 42,000,000 ՀՀ դրամ:<br>• Հեռահաղորդակցության ծախսերը մեկ տարվա կտրվածքով կազմում են 4,000,000 ՀՀ դրամ, իսկ երեք տարվա համար՝ 8,500,000 ՀՀ դրամ:<br>• Միջոցառումների կազմակերպման նպատակով նախատեսվում է 2,000,000 ՀՀ դրամ:<br>• Նյութատեխնիկական ապահովման ծախսերի համար նախատեսվում է 1,800,000 ՀՀ դրամ:<br><br>Ընդամենը՝ 54,300,000 ՀՀ դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլի հայաստանյան ներկայացուցչությունը կհամագործակցի ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի ու սոցիալական հարցերի, արտակարգ իրավիճակների նախարարությունների, պետական զբաղվածության գործակալության, բժշկա-սոցիալական փորձաքննություն գործակալության, ՀԿ-ների, գործատուների, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ, Սեյվ դը չիլդրեն Նիդերլանդներ և Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ կազմակերպությունների կողմից, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: Ծրագրի իրականացումը համաձայնեցվում է ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի ու սոցիալական հարցերի, արտակարգ իրավիճակների նախարարությունների հետ՝ ըստ վերջիններիս հետ կնքված Փոխըմբռնման հուշագրերի: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1297 -Ա**

**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԽՄԲԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 07/80-2/21500-14 և նոյեմբերի 28-ի N 06/3-3/21541-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 02/9263-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 25-ի ՖԲ/ԱնՄ-4/9554-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 01/10.1/4592 - 14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աղոնցի 15, բն. 20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 27,681,000 դրամ արժողությամբ «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակեր-պության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ.Մ.Մ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02214638) 2014 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում (2014 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և պատուհանների պատրաստում և տեղադրում՝ 4,676,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
«Կամրջակ» ՄԲՀԿ
տնօրեն Բ. ԱՂԱՄԱԼՅԱՆԻ կողմից
«18» Նոյեմբեր 2014 թ.

# Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնությունից |
| 3. | Բարեգործը | «LITTLE BRIDGE SWITZERLAND» NGO, նախագահ Տիկին Հայդե Աղեխայդ Քինդ, Շվեցարիա (Giacometti stasse134.7000 Chur, FO0569480): |
| 4. | Ծրագիրն կատարողը | «Կամրջակ » ՄԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Զ. Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187,<br>Հեռ՝ 516-044, Ֆաքս 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն Տավուշի մարզի Բերդավան համայնք, բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընհանուր բյուջեն կազմում է 27,681,000 (Քսանյոթ միլոն վեց հարյուր ութսունմեկ հազար) դրամ: «LITTLE BRIDGE SWITZERLAND» NGO-ի միջոցներ՝ 26,681,000 և Բերդավանի համայնքի միջոցներ՝ 1,000,000: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի մայիսի 16-ից մինչև 2015 թվականի հուլիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմվել է "ԻՋՆԱԽ" ՍՊԸ-ի կողմից, որը կազմել է 1725000 (մեկ միլոն յոթհարյուր քսանհինգ հազար դրամ) – 2014 թվականի մայիս – 2014 թվականի հուլիս (ավելացված արժեքի հարկ չի առաջանում):<br>Ներքին դռների և լուսամուտների փոփոխման համար «ՄՄՄ»ՍՊԸ-ի հետ կնքվել է կապալի պայմանագիր՝ 4676000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասուն վեց հազար) դրամ – 2014 թվականի մայիս – 2015 թվականի հուլիս:<br>Շինարարական աշխատանքների կատարման համար կնքվելու է կապալի պայմանգիր – 20280000 դրամի չափով:<br>Համայնքի կողմից ներդրումը կազմելու է 1000000 (մեկ միլիոն դրամ), որի համար հարկային արտոնություն չի ակնկալվում |
| 10. | Ձեռք բերվող(ներմուծվող) ապրանքներերի ու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները և նախատեսվող գինը | Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմվել է "ԻՋՆԱԽ" ՍՊԸ-ի կողմից, որը կազմել է 1725000 (մեկ միլոն յոթհարյուր քսանհինգ հազար դրամ):<br>Շինարարկան աշխատանքների կատարման համար կնքվելու է կապալի պայմանգիր, իսկ արտաքին և ներքին դռներ և լուսամուտների փոփոխման համար «ՄՄՄ»ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր 4676000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար) դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում : |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման ,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացվում է «Կամրջակ» ՄԲՀԿ-ի կողմից համագործակցելով Տավուշի մարզի Բերդավան գյուղի գյուղապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է և համայնքի ղեկավարի կողմից, իսկ աշխատանքները կատարելուց հետո, սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն |

«Կամրջակ»ՄԲՀԿ-ի տնօրեն Բենյամին Աղամալյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1298 –Ա**

**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 12-ի նիստին)**

**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ 26 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/23514-14 և 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 06/3-3/22947-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 02/9972-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N ՖԲ/ԱնՄ-4/10127-14 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի N 01/12.1/4192-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,462,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Ամանորյա նվերների տրամադրում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի 26 համայնքների երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանդ քենդի» հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2014 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N WVA/TAL ADP/SUPPL/01/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղցրավենիքով փաթեթների մատակարարում՝ 1,462,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ֆիրայր Էդիլյան

01 դեկտեմբերի 2014թ.

**«Ամանորյա նվերների տրամադրում ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի 26 համայնքների երեխաներին»**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

<table>
<tr><td>1.</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Ծրագրի նպատակն է ամանորյա նվերների փաթեթներ տրամադրել ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի 26 համայնքների 1950 երեխաներին:</td></tr>
<tr><td>2.</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3.</td><td>Բարեգործը</td><td>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada</td></tr>
<tr><td>4.</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37410749146</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալին, Արտենի, Թաթուլ, Հացաշեն, Նոր Արթիկ, Յամաքասար, Զարինջա, Սուսեր, Դաշտադեմ, Ձովասար, Կաթնաղբյուր, Եղնիկ, Դավթաշեն, Վերին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ, Կաքավաձոր, Վերին Սասնաշեն, Կարմրաշեն, Ոսկեթաս, Ակունք, Մաստարա, Աշնակ, Ագարակ, Գառնահովիտ, Իրինդ համայնքներ<br>Բնագավառը՝ սոցիալական</td></tr>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի բյուջեն կազմում է 1,462,500 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալին, Արտենի, Թաթուլ, Հացաշեն, Նոր Արթիկ, Յամաքասար, Զարինջա, Սուսեր, Դաշտադեմ, Ձովասար, Կաթնաղբյուր, Եղնիկ, Դավթաշեն, Վերին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ, Կաքավաձոր, Վերին Սասնաշեն, Կարմրաշեն, Ոսկեթաս, Ակունք, Մաստարա, Աշնակ, Ագարակ, Գառնահովիտ, Իրինդ համայնքների 28 դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներն ու 11 մանկապարտեզների երեխաները: Բարեգործություն ստացող երեխաների թիվն է 1950:</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>28 նոյեմբերի 2014թ.- 30 դեկտեմբերի 2014թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td><table>
<tr><th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>Ժամկետները</th><th>Անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr>
<tr><td>Մատակարարի կողմից նվերների փաթեթների պատրաստում և մատակարարում «Վորլդ Վիժն Հայաստան»-ի Թալինի գրասենյակ</td><td>28 նոյեմբերի 2014թ.<br>-<br>15 դեկտեմբերի 2014թ.</td><td>1,462,500 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>«Վորլդ Վիժն Հայաստան»-ի Թալինի գրասենյակի կողմից նվերների փաթեթների տրամադրում 1950 երեխաներին</td><td>15 դեկտեմբերի 2014թ.<br>–<br>30 դեկտեմբերի 2014թ.</td><td>չի պահանջում</td></tr>
</table></td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղցրավենիքի փաթեթներ տրամադրել ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի 26 համայնքների 1950 երեխաներին:<br>Ծրագրի իրականացման համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մատակարարման պայմանագիր է կնքել «ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի հետ: Ծրագրի</td></tr>
</table>



<table>
<tr><td></td><td></td><td>ընդհանուր արժեքը կազմում է 1,462,500 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալին, Արտենի, Թաթուլ, Հացաշեն, Նոր Արթիկ, Յամաքասար, Զարինջա, Սուսեր, Դաշտադեմ, Ձովասար, Կաթնաղբյուր, Եղնիկ, Դավթաշեն, Վերին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ, Կաքավաձոր, Վերին Սասնաշեն, Կարմրաշեն, Ոսկեթաս, Ակունք, Մաստարա, Աշնակ, Ագարակ, Գառնահովիտ, Իրինդ համայնքների տեղական ինքնակառավարման և դպրոցների կառավարման մարմինների հետ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Թալինի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Կանադայի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի իրականացման արդյունավետությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1299 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 12-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/21343-14 և նոյեմբերի 24-ի N 06/3-3/20955-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02618216) 2014 թվականի հոկտեմբերի 21-ին կնքված պայմանագում նշված գործարքը, որով նախատեսվում է թուջե սողնակների մատակարարում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1300 –Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 12-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԵՐԵՔ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/22958-14 և դեկտեմբերի 8-ի N 06/3-3/2425-14, Հայաստանի Հանրապետության արդարադատու-թյան նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 02/9815-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N 03/07-1/15019-14 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի դեկտեմբերի 8-ի N 01/04.2/4362 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրակա-նացվող՝ 300,011 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի երկհարկանի երեք մասնաշենքերի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված N Infra/Constr 02-2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի երկհարկանի երեք մասնաշենքերի վերանորոգում՝ 300,011 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի մանուկների հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Արմավիրի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի
հոգեբարձուների խորհրդի կողմից
10 հոկտեմբերի 2014թ.

**Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի երկհարկանի երեք մասնաշենքերի վերանորոգում**
**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Արմավիր մարզի Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի երկհարկանի երեք մասնաշենքերի վերանորոգում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հայաստանի Մանուկներ» հիմնադրամ ԱՄՆ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամ, ՀՎՀՀ 02569972, Երևան, Հյուսիսային պողոտա 1, 8րդ հարկ, 24 սենյակ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արմավիր մարզի Գետաշեն համայնք, շինարարության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 300 011 /երեք հարյուր հազար տասնմեկ/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, առանց ԱԱՀ ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արմավիր մարզի Գետաշեն համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտները և համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15/10/2014թ. - 30/06/2016թ.: |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Համաձայն կապալի պայմանագրի կնքված 07 հոկտեմբերի 2014թ. թիվ infra/constr 02-2014 նախատեսվում է ծրագրի իրականացման ժամանակահատվածում վերանորոգել դպրոցի երեք մասնաշենքերը և այլ միջոցառումներ նախատեսված չէ: |
| 10. | Ձեռք բերվող ներմուծվող ապրանքների ու ծառա- յությունների համառոտ նկարագիրը ,ծավալները և նախատեսվող գինը | Բեռների ներմուծում ծրագրով չի նախատեսվում: Ծրագրի շրջանակներում օգտագործվող անհրաժեշտ շինանյութերը ձեռք կբերվի կապալառուի միջոցով, համապատասխան կնքված պայմանագրի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պե-կան կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկա- րագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն ինականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: |

**Անուշ Եղիգարյան**

**Գործադիր տնօրեն**
**Հայաստանի մանուկներ հիմնադրամ**

| | | |
|---|---|---|
| | Կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսերը 01/01/2014թ. - 31/12/2014թ. ժամանակահատվածի համար կազմում են - **180.000 ԱՄՆ դոլար**:<br>Տարածքի վարձակալություն գրասենյակի համար 30.000 ԱՄՆ դոլար,<br>Աշխատավարձ 53.000 ԱՄՆ դոլար,<br>Վառելիք մեքենաների համար 10.000 ԱՄՆ դոլար,<br>Գործուղումներ 5.000 ԱՄՆ դոլար,<br>Կոմունալ վճարումներ 20.000 ԱՄՆ դոլար,<br>Աուդիտորական ծախսեր 6.000 ԱՄՆ դոլար,<br>Գրասենյակային գույքի ձեռք բերում 25.000 ԱՄՆ դոլար,<br>Գրասենյակային պարագաների ձեռք բերում 2.000 ԱՄՆ դոլար,<br>Միջոցառումների կազմակերպման համար ադմինիստրատիվ ծախսեր 29.000 ԱՄՆ դոլար: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: |

Անուշ Եղիազարյան

Գործադիր տնօրեն

Հայաստանի մանուկներ հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1302 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 12-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/21296-14 և նոյեմբերի 24-ի N 06/3-3/20954-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշման (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Ս-927-Ա որոշման խմբագրությամբ) և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «79,500,000 դրամ» բառերը փոխարինել «292,000,000 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ 00804091) կնքված՝ ստորև նշված պայմանով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Կլիմա կոնտրել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02584502) 2014 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված փոխանցման հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման կաթսայի և ծխատարի մատակարարում՝ 425,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետարանին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի
տնօրեն Ռ.Խաչատրյանի կողմից
«18» դեկտեմբերի 2014թ.

«Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում»
ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Երևանի կենդանաբանական այգու ցուցադրական կենդանիների կացարանային պայմանների բարելավում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին, այցելուների համար առավել բարենպաստ և ապահով պայմանների ստեղծում, հասարակության լայն զանգվածի համար էկոդաստիարակության տրամադրում, երեխաների և պատանիների էկոկրթությանն ուղղված միջավայրի ստեղծում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային պողոտա 10/8, ՀՎՀՀ՝ 01563271),<br>«Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման» հիմնադրամ (ք.Երևան, Ֆիզկուլտուրնիկների 48, ՀՎՀՀ՝ 02565835)<br>Սփյուռքահայ, միջազգային և հայկական բարեգործական կազմակերպություններ և անհատներ: |



| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ (ք.Երևան, Մյասնիկյան պողոտա 20, ՀՎՀՀ՝ 00804091) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Քաղաք Երևան՝ հանրային կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 292.000.000 դրամ, որից՝<br>«Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամից ստացված միջոցներ՝ 40.000.000 դրամ,<br>«Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման» հիմնադրամից ստացված միջոցներ՝ 114.500.000 դրամ,<br>Սփյուռքահայ, միջազգային և հայկական բարեգործական կազմակերպություններից և անհատներից՝ 137.500.000 դրամ<br>Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի քաղաքային համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10.10.2012թ. - 30.12.2016թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կենդանաբանական այգու ավտոբուսի կանգառի, բորենիների, առյուծների, արջերի և վագրերի ազատավանդակների կառուցման նախագծահետազոտական աշխատանքներ – 10.000.000 դրամ (մինչև 30.12.2016թ.),<br>2. կենդանաբանական այգու ընդհանուր հայեցակարգային և դպրոցի հայեցակարգային նախագծերի մշակման աշխատանքներ 2.000.000 դրամ (մինչև 30.12.2016թ.),<br>3. այգու մուտքի և ավտոկանգառի, ճանապարհների, մանկական խաղահրապարակի, ընդհանուր օգտագործման տարածքների, այգու ավտոբուսի կանգառի, արջերի, վագրերի, բորենիների, առյուծների և այլ կենդանատեսակների ազատավանդակների կառուցում – 182.000.000 դրամ, այդ թվում՝ շինանյութերի ձեռքբերում – 40.000.000 դրամ, շինարարական աշխատանքներ – 142.000.000 դրամ (մինչև 30.12.2016թ.),<br>4.կենդանիների ներմուծում, դրանց հետ կապված խնամքի պարագաների և |

| | | |
|---|---|---|
| | | դեղորայքի (լաբորատոր նյութերի) ձեռքբերում (կամ ներմուծում) – 98.000.000 դրամ (մինչև 30.12.2016թ.): |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. կենդանաբանական այգու ավտոբուսի կանգառի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում – 800.000 դրամ,<br>2. կենդանաբանական այգու ավտոբուսի կանգառի կառուցում – 1.657.217 դրամ,<br>3. բորենիների ազատավանդակի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում – 1.000.000 դրամ,<br>4. բորենիների ազատավանդակի կառուցում – 12.389.920 դրամ,<br>5. վագրերի ազատավանդակների վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում – 1.000.000 դրամ,<br>6. վագրերի ազատավանդակների վերակառուցման աշխատանքներ – 50.000.000 դրամ,<br>7. արջերի ազատավանդակի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում – 1.000.000 դրամ,<br>8. արջերի ազատավանդակի կառուցում – 20.000.000 դրամ,<br>9. առյուծների ազատավանդակի հայեցակարգային նախագծի կազմում 6.000.000 դրամ,<br>10. կենդանաբանական այգու ընդհանուր հայեցակարգային նախագծի կազմում – 400.000 դրամ,<br>11. կենդանաբանական այգու դպրոցի հայեցակարգային նախագծի կազմում – 800.000 դրամ,<br>12. կենդանիների խնամքի համար պարագաների և դեղորայքի (լաբորատոր նյութերի) ձեռքբերում (կամ ներմուծում) – 20.000.000 դրամ:<br>13. մանկական խաղահրապարակի կառուցում, դրա իրականացման համար նախատեսված ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) – 25.000.000 դրամ: |



| | | |
|---|---|---|
| | | 14. կենդանաբանական այգու կերախոհանոցի հայեցակարգային նախագծի կազմում – 800.000 դրամ,<br>15. կենդանաբանական այգու կերախոհանոցի կառուցում, դրա իրականացման համար նախատեսված ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) – 5.000.000 դրամ:<br>16. կենդանաբանական այգու բոլոր կենդանատեսակների վանդակների և ազատավանդակների վերակառուցման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների համար ապրանքների և ծառայությունների ձեռքբերում (կամ ներմուծում) – 33.000.000 դրամ:<br>17. այցելուների համար առավել բարենպաստ և ապահով պայմանների ստեղծմանն ուղղված աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերում (կամ ներմուծում) – 15.000.000 դրամ:<br><br>Վերոնշյալ ծառայությունների և ձեռքբերումների համար ակնկալվում են արտոնություններ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն կներկայացվի բարերարներին, ինչպես նաև սահմանված կարգով ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և Երևանի քաղաքապետարանին: |